

ՀՀ ԳԱԱ Հ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԳՐԱԿԱՆ ՀԱՅԵՐԵՆԸ ԶԼՄ-ՆԵՐՈՒՄ

(ՄԱՅՐԵՆԻՒՄ ՕՐՎԱՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՆՅՈՒԹԵՐ)
21-Ը ՓԵՏՐՎԱՐԻ, 2025 Թ.

ԵՐԵՎԱՆ
ԳԱԱ ԼԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2025

ՀՏԴ 811.19:070(082)
ԳՄԴ 81.51+76.0g43
Գ 870

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ:

Խմբագիր՝ Թ. Ա. Ասոյան

Կազմող՝ Լ. Ղամոյան

Գ 870 «Գրական հայերենը ԶԼՄ-ներում» միջոցառման նյութեր / կազմող՝
Լ. Ղամոյան.- Եր.: ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2025.-67 էջ:

Ժողովածուում տեղ են գտել Մայրենիի օրվան նվիրված «Գրական հայերենը ԶԼՄ-ներում» խորագրով միջոցառման ընթացքում ներկայացված զեկուցումները, որոնք վերաբերում էին հայերենի մաքրության հարցերին: Քննարկման նյութ են հանդիսացել զանգվածային լրատվամիջոցների՝ հեռուստաընկերություններ, թերթեր, կայքեր, սոցիալական ցանցեր, լեզուն:

Ժողովածուն օգտակար կարող է լինել հայերենի մաքրությամբ հետաքրքրվողների և ուսումնասիրության հարցերով զբաղվողների համար:

ՀՏԴ 811.19:070(082)
ԳՄԴ 81.51+76.0g43

ISBN 978-9939-970-14-1
© ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտ, 2025

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Գրական հայերենի մաքրության հարցերն այսօր մղվել են առաջին պլան: Բառապաշարը գերհագեցած է օտարաբանություններով, խոսքում հաճախադեպ են բառաձևերի, շարահյուսական կառույցների ոչ ճիշտ կիրառություններ: Հասարակական գրեթե բոլոր շերտերում, կառույցներում, վայրերում իշխում է աղավաղված հայերենը: Բացահայտ է ռուսերենի և անգլերենի մեծ ազդեցությունը խոսակցական բանավոր հայերենի վրա: Աշակերտ, թե ուսանող, երիտասարդ, թե ծեր, աղջիկ, թե տղա, պատգամավոր, թե կառավարության անդամ, մտավորական, թե բանվոր, հասարակական կազմակերպությունում, թե Ազգային ժողովում բոլորի բանավոր խոսքը լի է գրական հայերենի դեմ մեղանշումներով: Թվում է, թե գոնե գրավոր խոսքը գերծ կմնա շեղումներից, սակայն հատկապես էլեկտրոնային լրատվամիջոցներում ևս առկա են բազմաթիվ թերացումներ:

ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում կամ ինստիտուտի համագործակցությամբ հաճախ են կազմակերպվում քննարկումներ՝ նվիրված մայրենի լեզվի մաքրության հարցերին: Դրանց մասնակցում են հայտնի լեզվաբաններ, մտավորականներ, ուսուցիչներ և ուսանողներ, որոնց մտահոգությունը մեկն է՝ պաշտպանել հայերենը օտարամուտ ազդեցություններից, պահպանել հայեցի լեզվամտածողությունը որպես ազգային ինքնագիտակցության և համահավաք միասնության հիմնական միջոց:

Այդպիսի նպատակ էր հետապնդում 2025 թվականի փետրվարի 21-ին Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում կազմակերպված «Գրական հայերենը ԶԼՄ-ներում» խորագիրը կրող միջոցառումը՝ նվիրված Մայրենի լեզվի օրվան: Զեկուցումներով հանդես եկան արդի հայերենի բաժնի գիտաշխատակիցները: Զեկուցումների նյութը մի շարք հեռուստաընկերությունների տարաբնույթ հաղորդումների, կայքերի, թերթերի, սոցիալական ցանցերի լեզուն էր:

Զեկուցումների այս ժողովածուն կարող է օգտակար լինել հայերենի մաքրության հետաքրքիրվողների և ուսումնասիրության հարցերով զբաղվողների համար:

Թ. Ասոյան

Առաքելյան Կարինե

ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան

լեզվի ինստիտուտի ավագ գիտաշխատող, բ.գ.թ.

karine.arakelyan.2016@mail.ru

«ՀՐԱՊԱՐԱԿ» ՕՐԱԹԵՐԹԻ

ԼԵԶՎԻ ՄԱՍԻՆ

Ներածություն: Գաղտնիք չէ, որ այսօր ԶԼՄ-ների և սոցցանցերի ազդեցությունը հանրային կյանքի վրա ահռելի է: Սրանով պայմանավորված դրանց լեզուն մեծ ազդեցություն ունի հանրային խոսքի ձևավորման վրա: Հայկական լրատվական դաշտում դերակատարների պակաս չի զգացվում: Լրատվամիջոցները միմյանցից խիստ տարբեր են իրենց բնորոշ զանազան հատկանիշներով, այդ թվում գրագիտության մակարդակով:

Անկախ Հայաստանի լրատվական դաշտում «Հրապարակ» օրաթերթը նոր անուն չէ. լույս է տեսնում 2008-ից, ունի նաև իր համացանցային կայքը՝ hrarak.am-ը: Թերթում տպագրվող նյութերը հաճախ են աչքի ընկնում որոշակի արժանիքներով՝ արդիականությամբ, լրատվական բարեվարքության կանոնների պահպանմամբ և այլն:

Դրանցից մեկն էլ ճշգրիտ և գրագետ խոսքն է, ինչն անչափ կարևոր է և օրինակելի: Այսուհանդերձ լրագրի լեզուն զերծ չէ թերություններից, որոնք երբեմն-երբեմն սպրդում են, և որոնց շատ համառոտ անդրադարձ ենք կատարել: Ուսումնասիրության առարկան եղել են 2025 թ. փետրվարի 1-18 (9-19) համարները, ինչպես նաև կայքը:

Անհարկի փոխառություններ: Թերթում երբեմն հանդիպում են բառեր, որոնք հիմնականում միջազգայնորեն ճանաչված եզրույթներ են, սակայն սրանց հայերեն համարժեքներն առկա են, ուստի խրախուսելի չէ օտար բառի կիրառությունը, ինչպես. ռեգիոնալ լիդեր (փոխ.՝ տարածաշրջանային առաջնորդ), տեռոր (փոխ.՝ ահաբեկչություն), կատեգորիա (փոխ.՝ կարգ, դաս, խումբ), կոմպոնենտ (փոխ.՝ մաս, բաղադրամաս), կաբինետ (փոխ.՝ աշխատասենյակ), ֆրոնտ (փոխ.՝ ճակատ), կոնֆլիկտ (փոխ.՝ հակամարտություն), կատաստրոֆիկ (փոխ.՝ աղետալի), պրոտոկոլ (փոխ.՝ արարողակարգ),

դեմոկրատիա (փոխ.՝ ժողովրդավարություն), տենդենց (փոխ.՝ միտում), ֆունդամենտալ (փոխ.՝ հիմնարար), ավտորիտար (փոխ.՝ բռնապետական), ֆիքսել (փոխ.՝ արձանագրել), սուվերեն (փոխ.՝ ինքնիշխան), օկուպացիա (փոխ.՝ բռնազավթում), կոռեկտ (փոխ.՝ պատշաճ), պրոցես (փոխ.՝ գործընթաց), սանկցիա (փոխ.՝ պատժամիջոց), միգրանտ (փոխ.՝ ներգաղթյալ) և այլն, օրինակներ. «Զգտում, որը հիմնականում դրսևորվում է *ռեզիոնալ լիդեր* երևալու հավանականության և Ադրբեջանի ու Թուրքիայի հանրությունների առաջ «ցուցադրվելու» մեջ» (№ 14, 11 փետրվար), «Արցախը հանձնելուց առաջ էլ Փաշինյանն ու իր խմբակը տեղեկատվական *տեռոր* էին սկսել և շարունակում են մինչ օրս» (№ 10, 4 փետրվար), «Արտաքին *ֆրոնտում* ունենք անհաջողություններ՝ դիվանագետներն են պատճառը» (№ 12, 6 փետրվար), «Դուք նույնիսկ wikileaks-ի մեջ ընկած Արման Բաբաջանյան անուն-ազգանունով *միգրանտին* եք ճանաչում» (№ 12, 6 փետրվար), «Նա փախավ Հայաստանից՝ հավանաբար չցանկանալով վերջինիս հետ կիսել Հայաստանի *սուվերեն* տարածքների *օկուպացիայի*, Արցախի հանձնման և հայաթափման պատասխանատվությունը» (№12, 6 փետրվար):

Այսպիսի բառերի հանդիպում ենք նաև հոդվածների վերնագրերում. «Սա աշխարհաքաղաքական տերերի փնտրտուքի *ֆինալային* արարն է» (№ 14, 11 փետրվար), «Արցախի հարցն Ադրբեջանի վրա նույնքան *նեգատիվ* է ազդելու, որքան ցեղասպանության հարցը՝ Թուրքիայի» (№ 19, 18 փետրվար), «Արելյանի թատրոնից կմնա միայն շենքի *ֆասադը*» (№ 19, 18 փետրվար) և այլն:

Երբեմն հոդվածագիրներն օտար բառերը կիրառում են ոճական նպատակներով, ինչպես. «Գեներալ Գագո, կպահե՞ս, նրա համար պետք է *մայկա-տռուսիկ* շատ առնել, որովհետև շուտ-շուտ թրջում է» (№ 13, 8 փետրվար), «Դուք էլ կարող եք նույնն անել... ու ազատվեք օտարաբույծ այդ *սբրոդից*» (№ 13, 8 փետրվար), «Բանն այն է, որ *«կամանդոյուշին»* մտադիր է մասնակցել խորհրդարանի գալիք ընտրություններին» (№ 10, 4 փետրվար) և այլն:

Օտար բառերի կիրառության յուրօրինակ դեպքերի ենք հանդիպում էդիկ Անդրեասյանի հոդվածում: Հեղինակն իր նյութը վերնագրել է «Դադարեք լինել կարիկատուրա», և ուշագրավ է, որ ինքն էլ հիմնավորում է օտար բառ գործածելու անհրաժեշտությունը՝ գրելով. «Ծաղրանկարները հումորի, զրոտեսկի, սատիրայի ժանրերով ար-

ված թեմատիկ նկարներ են, մինչդեռ գոնե ես կարիկատուրա և կարիկատուրաներ ա-
սելով նկատի ունեմ բացառապես մարդ արարածին, որ, բախտի բերամբ կամ պա-
տահմամբ, հայտնվել է հակացուցված միջավայրում, մի տեղ, որտեղ ինքը չպետք է լի-
ներ, բայց կա» (№ 10, 4 փետրվար):

Կետադրական սխալներ: Թերթի էջերում սրանք ևս փոքր թիվ են կազմում, նշենք դրանցից մի քանիսը. Շաղկապից հետո դրվել է բութ, ինչպես. «ինչպես նաև՝ կու-
տակել է 550 միլիոն դրամի պարտք՝ գույքահարկի գծով» (№ 9,1 փետրվար): Հրամա-
յական եղանակի բայաձևը շեշտ չի կրում. «Արցախը հանձնվեց՝ մեղադրեք արցախցի-
ներին» (№ 12, 6 փետրվար): Ժամանակի պարագան նախադասության անդամներից տրոհվել է բութով. «Հատկապես վերջին տարիներին՝ Հայաստանի գործող իշխանությ-
ունների վարած քաղաքականության վրա նկատելի էր ամերիկյան ազդեցությունը» (№ 12, 6 փետրվար): Նախադասության զեղչված անդամի՝ շաղկապի փոխարեն դրված է ստորակետ, ոչ բութ. «Ինձ թվում է, Դուք նույնիսկ wikileaks-ի մեջ ընկած Արման Բաբաջանյան անուն-ազգանունով միգրանտին եք ճանաչում» (№ 12, 6 փետրվար): Հա-
մադաս նախադասությունները միմյանցից անջատվել են բութով և ոչ ստորակետով
կամ, որ ավելի ճիշտ կլիներ, միջակետով. «Ասուլիսի նախորդ օրն արդեն տեղեկա-
տվական հոդ էին նախապատրաստել Սյունիքով անցնող «միջանցքը» տալու համար՝
«Ազատություն» ռադիոկայանն ԱՄՆ պետքարտուղարության գաղտնագերծած փաս-
տաթղթերի հիման վրա աղմկահարույց ռեպորտաժ էր պատրաստել» (№ 10, 4 փետր-
վար): Միջանկյալ նախադասությունը մի կողմից տրոհվել է ստորակետով, մյուս
կողմից՝ բութով, երկու կողմից ստորակետով տրոհվելու փոխարեն. «Վաշինգտոնում
նման վերաբերմունքից հետո Նիկոլ Փաշինյանը, ասում են՝ ծանր տրամադրությամբ է
Հայաստան վերադարձել» (№ 14, 11 փետրվար) և այլն:

Քերականական սխալներ: Հանդիպել ենք լեզվական նորմից ինչ-ինչ շեղումնե-
րի, ինչպես. «Հիմա 2018-ի «թավշյա հեղափոխությունը» և այդ իրենց արտաքին դիրքա-
վորումը հօդս է ցնդում» (№ 12, 6 փետրվար). առկա է համաձայնության սխալ: «Կազմա-
կերպության կողմից ֆինանսավորվող հայաստանյան ծրագրերի ու կազմակերպու-
թյունների մեծ մասը կարող են փակվել» (№ 12, 6 փետրվար). առկա է բակառություն:
«Նիկոլ Փաշինյանի և Սամվել Բաբայանի ստվերային համագործակցությունը կրկին

նոր թափ է հավաքել» (№ 10, 4 փետրվար). առկա է կրկնաբանություն: «Տեսա, որ վայրկենական վարկ են ձևակերպել, 4 մլն 900 հազար դրամի, որը փոխանցվել է ուն Ա. Կարապետյանին» (№ 12, 6 փետրվար). Ուն անորոշ դերանվան առկայության պարագայում ն հոդի կիրառությունը սխալ է:

Հանդիպել ենք նաև արդի արևելահայերենին ոչ բնորոշ իրողությունների, օրինակ. «Հայոց ցեղասպանության մասին արած հայտարարություններն աննկատ չեն մնացել թե՛ Ադրբեջանում և թե՛ Թուրքիայում» (№ 9, 1 փետրվար), «Հրապարակմամբ ասվում էր, որ Հայաստանի իշխանությունները 1999 թվականին դիտարկել են Մեդրիի շրջանը Լեռնային Ղարաբաղի հետ փոխանակելու տարբերակը» (№ 10, 4 փետրվար), «Մեծ դժվարությամբ տրվեցի այդ տեղեկատվությանը» (№ 14, 11 փետրվար) և այլն:

Ժողովրդախոսակցական բառեր և ձևեր: Թերթում առկա են ժողովրդախոսակցական և բարբառային բառաշերտին պատկանող միավորներ, որոնց կիրառությունը հիմնականում արդարացված է և ունի ոճական արժեք, ինչպես. «Նա մի տգեղ սովորություն ունի՝ սիրում է **քիթը խոթել** ուրիշների անձնական նամակագրության մեջ և հետո դա հրապարակայնացնել Ազգային ժողովի բարձր ամբիոնից» (№ 12, 6 փետրվար), «Սկսվեց քաշքշոց, հրմշտոց, մի խոսքով՝ **«խփոցի»**» (№ 9, 1 փետրվար), «Ավել գումարը նրա համար է, որ ավտոբուսները շատանան, և **կզած** մարդիկ վերանան» (№ 13, 8 փետրվար): Կան նաև մերժելի ձևեր, ինչպես. «Մա այն ոլորտ ա, որտեղ առանց *քֆուրի* հնարավոր չէ» (№ 10, 4 փետրվար) կամ «Էս «տղերքը» երբ աղջիկներից *բամբասջի* դարձան: Իրար տեսնում են. *Ջիգյար* են անում, գնումեն *կամեռաները* միացնում, բամբասում: Տեսնես դուք ձեզ հայելու մեջ նայելուց *տենց* հպարտ տղա եք զգու՞մ» (hraparak.am, 19.02.2025):

hraparak.am-ի լեզուն: «Հրապարակի» համացանցային կայքում ևս նյութերը հրապարակվում են մաքուր գրական հայերենով: Սակայն պայմանավորված լուրերն արագ հաղորդելու խնդրով և առկա մրցակցությամբ՝ երբեմն թույլ են տրվում վրիպակներ, ինչպես. «Հայր Ասողիկ կարապետյան», «Հայ Առաքելական Սուրբ եկեղեցին ի դեմս իր հոգևո դասի» (hraparak.am 10.02.2025) և այլն:

Վերջաբան: Ամփոփելով այս համառոտ քննությունը՝ ուզում ենք նշել, որ «Հրապարակ» օրաթերթը հիմնականում հավատարիմ է ձևի և բովանդակության ներդաշ-

նակության գաղափարին և իր կարևոր ու արդիական նյութերը ճնշող մեծամասնությանմբ տպագրում է անադարտ գրական հայերենով: Տեղ-տեղ սպրդող սխալները կամ շեղումները չեն ստվերում այն ահռելի աշխատանքը, որ կատարում է թերթի խմբագրակազմը, որին հայտնում ենք մեր գնահատանքը և մաղթում բարի ու արգասավոր գործունեություն:

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԼԵԶՈՒՆ (Հ 1 ԵՎ 1 ԼՈՒՐԵՐ.ԱՄ)

Հեռուստատեսության լեզուն պատկերացում է տալիս հանրության լեզվական մշակույթի որակի մասին: Այդ նպատակով քննենք նրա խոսքը (հաղորդավար, պատգամավոր, նախարար, բժիշկ, մանկավարժ, երգիչ, դերասան և այլք), որն աչքի է ընկնում տարաբնույթ շարահյուսական և բառագործածական մեղանչումներով:

Դրանք են.

1) **Խոսակցական հայերենի ա-ով ձևերն** են կիրառվում օժանդակ բայի ներկա ժամանակի եզակի 3-րդ դեմքի Է-ի փոխարեն, ինչպես նաև անվանաբայական բաղադրյալ ստորոգյալի հանգույցի դեպքում: **Պետք է** եղանակիչի փոխարեն կիրառվում է **պետք ա** ձևը: Բերենք օրինակներ հայտնի հաղորդավարի խոսքից. «Իշխանությունը ինչ **ասում ա** (փիս.՝ ասում է), **ասում եք** դավաճան»: «**Ըն՝ենց չի** (փիս.՝ այնպես չէ), որ դա **իդեալական ա** (փիս.՝ իդեալական է)»: «Միսալն ընդունելը **ամո՞թ ա** (փիս.՝ ամոթ է)»: «Մենք **պետք ա** (փիս.՝ պետք է) ունենանք այնպիսի սահմանադրություն, որ կեղծված չլինի»: «**Թեմա ա** (փիս.՝ թեմա է), որի շուրջը **պետք ա** (փիս.՝ պետք է) մտածել»: «Ինքը **ուզում ա** (փիս.՝ ուզում է) իր թեկնածությունը դնել»: «**Էս** (փիս.՝ սա) **կարևոր ա** (փիս.՝ կարևոր է): **Ինչն ա** (փիս. ինչն է), որ էս (փիս.՝ այս) վիճակին **նպաստում ա** (փիս.՝ նպաստում է)»: «**Էդ** (փիս.՝ այդ) դասերը **պետք ա առնենք** (փիս.՝ պետք է առնենք) ... (նախարարի խոսքից)»: «Երեխան **պետք ա բռնի** (փիս.՝ պետք է բռնի) մեկնած ձեռքը» (պարուսույց): «Աղջիկս **Մոսկվայում ա** (փիս.՝ Մոսկվայում է)»: «Մեզ համար **հասկանալի չի** (փիս.՝ հասկանալի չէ)» (դերասանուհի):

ա) **Խոսակցական հայերենով բայակազմություն:** Ե լծորդ ձայնավորի փոխարեն կիրառվում է **ա** լծորդ ձայնավոր: Օրինակներ՝ «Արժի, որ **խոսանք** (փիս.՝ խոսենք) նախկին արտգործնախարարների հետ» (քաղաքագետ): «Ներողություն եմ խնդրում, որ ձեզ **սպասացնում ենք** (փիս.՝ սպասեցնում կամ սպասել ենք տալիս)»

(բժշկի խոսքից): «Եթե շատ բարդ տեքստը **պարզացնենք** (փխ.՝ պարզեցնենք կամ պարզ դարձնենք)» (կառավարության նիստից): Խոսակցական հայերենի փայլուն դրսևորում կառավարության նիստից. «Մեր ինստիտուտները ձևավորվում են **ըսենց, ըսենց**: Ինստիտուտը **ինչ ա**»: «**Էսօր իրիկունը** կտեսնենք: Դպրոցի **երեխեքին** հրավիրենք: **Էսքան խոսացինք, խոսացինք**, լավ եզրակացության **էկանք**»: Խոսակցական հայերենով է ենթակայական դերբայը ասում նախարարը. «Կադրային քաղաքականությունը ունի **երևացող** (փխ.՝ երևացող) և չերևացող կողմեր»:

բ) **Դիմավոր բայ + անորոշ դերբայ կառույցում անորոշ դերբայի փոխարեն գործածվում է խոսակցական ըղձական եղանակ**: Օր. «**Ուզում եմ** մեր ուշադրությունը **հրավիրեմ** (փխ. ուզում եմ հրավիրել) **էն** (փխ.՝ այն) թեմայի վրա»: «Երգերը գրել եմ ես, **ուզում եմ ասեմ** (փխ.՝ ուզում եմ ասել) **իրանց** (փխ.՝ իրենց) համար» (երաժիշտ): «Իրոք, մարդ **կարա ասի** (փխ.՝ կարող է ասել)»: «**Իրա** (փխ.՝ իր) մասին **կարանք պատմել** (փխ.՝ կարող ենք պատմել)» (հաղորդավար):

2) **Հոլովների և հոլովակապային կառույցների խոսակցական դրսևորումներ.**

ա) **-իս-ով** համակատարի փոխարեն անորոշ դերբայի բացառական հոլովի կիրառություն: Օր.՝ «Դուդուկի մասին **խոսելուց** (փխ.՝ խոսելիս)» (կոմպոզիտոր): «Ի՞նչ իրեր վերցնեմ **գնալուց** (փխ.՝ գնալիս)» (դերասան):

բ) **Խնդրառության այլ սխալներ**: Օր.՝ «Ես եղել եմ կիրանցիների **կողքը** (փխ.՝ կողքին)» (պատգամավոր): «Ի՞նչ **գույն էր** (փխ.՝ գույնի էր) Արսենի ժամացույցը» (հեռուստախաղ): «Չեմ միջամտում իրավապահի **աշխատանքի մեջ** (փխ.՝ աշխատանքին)» (մարզպետի խոսքից): «Ինչպես ծանոթացաք Շարլ Ազնաուրի **երգերի հետ** (փխ.՝ երգերին)» (հաղորդավար, Առավոտ լուստ): Այստեղ **ծանոթանալ** բայն արտահայտում է միակողմանի հարաբերություն և պահանջում է տրական հոլովով հանգման խնդիր: «Վարչապետը Տանձուտում հանդիպել է տեղի **բնակիչներին** (փխ.՝ բնակիչների հետ)» (Լուրեր): **Հանդիպել** բայը, ինչպես նշում է Ս. Աբրահամյանը, տվյալ համատեքստում արտահայտում է փոխադարձ հարաբերություն և պահանջում է **հետ** կապով միասնության խնդիր (բնակիչների հետ):

Միայն է գործածված **կատարած** բայը **կատարվել**-ի փոխարեն հետևյալ օրինակում. «Շատ աշխատանքներ **են կատարած** (փխ.՝ կատարված) ճարտարապետների կողմից» (ճարտարապետի խոսքից):

զ) **Հանդիպում են նաև դերանվան՝ որպես կապի խնդիր հանդես գալու դեպքում, խոսակցական ձևեր:** Օր.՝ «Ամենասիրելի երգը **իմ համար** (փխ.՝ ինձ համար) սա է» (երգիչ): «Հիմա հույսերը կապել ենք **ձեր հետ** (փխ.՝ ձեզ հետ)»: «**Իրա մասին** (փխ.՝ իր մասին) **կարաք** (փխ.՝ կարող եք) **պատմել**» (Չքաղաքականացնել, հաղորդավար):

3) **Օտարաբանություններ:** Գրական հայերենի համար օրինաչափական չեն **մոտ** կապի հետևյալ կիրառությունները. Օր.՝ «**Իմ մոտ ոչ մի միտք** չի եղել (փխ.՝ Ես չեմ մտածել)»: «**Էդ** (փխ.՝ այդ) հարցը միայն **իմ մոտ չէ** (փխ.՝ ինձ մեջ չէ)»: «Դա հետաքրքրություն է առաջացնում **երեխաների մոտ** (փխ.՝ երեխաների մեջ)»: «**Ինձ մոտ** (փխ.՝ ինձ մեջ) ֆրանսիական երաժշտությունը նուրբ զգացմունքների հետ է առնչվում» (հաղորդավար):

Օտարաբանություն են նաև հետևյալ հոլովաձևերը, կապակցման միջոցը և ձևակերպումները. Օր.՝ «**Ինչումն ա** խնդիրը (փխ.՝ ինչն է)» (Չքաղաքականացնել, հաղորդավար): «**Ինչումն ա** (փխ.՝ ինչն է) հարցը» (հայտնի հաղորդավար): «**Խնդիրը կայանում է նրանում** (փխ.՝ խնդիրն այն է)»: «**Լուծումը տեսնում եմ նրանում** (փխ.՝ լուծումն այն է)»: «Կոնտրաստի նյութը **իրենից ներկայացնում է** (փխ.՝ կոնտրաստի նյութն է)»: «Ես **հանդիսանում եմ** ինֆորմացիայի ինստիտուտի տնօրենը (փխ.՝ Ես ինֆորմացիայի ինստիտուտի տնօրենն եմ)»: «Դուք ուզում եք, **որպեսզի** (փխ.՝ որ) «Եվրադաշինքը» ընտրություններից հետո միանա մեկ այլ կուսակցության» (հաղորդավարուհի, Գյումրու ավագանու ընտրություններ):

Օտար բառեր: «Մեր տունը **ռեմոնտ արած ա** (փխ.՝ վերանորոգված է)» (պատգամավորի խոսքից): «Շատ **վրեղնի** (փխ.՝ վտանգավոր) ցեխում ենք աշխատում» (պատգամավոր): «**Մերսի, էս ջազվեն քոնն է**» (հեռուստախաղ, դերասան): «Առաջին կուրսի առաջին **սեմեստրին** (փխ.՝ կիսամյակին)» (տնտ.ինստ. տնօրեն): «Նման **սիտուացիաներ** (փխ.՝ իրադրություններ), որ երեխաների հետ շատ են լինում» (հաղորդավար): «Հիմա մեկ ուրիշ **պերսոնաժի** (փխ.՝ անձի) մասին» (հայտնի հաղորդավար):

4) **Բառագործածության սխալներ,** որը բառիմաստի չիմանալու հետևանք է: Բերենք օրինակներ՝ «Մենք **բազմաթիվ անգամ** (փխ. բազմիցս) ասել ենք, որ ցեղասպանությունը **պետք ա** (փխ.՝ պետք է) ընդունվի Թուրքիայի կողմից» (պատգամավոր): «**Էդ** (փխ.՝ այդ) տեսակետից շատ **լավ ա** (փխ.՝ լավ է) **ութանասունից** (փխ.՝ ութսունից)

հետո» (դերասանուհի): «Մետրոպոլիտենը օրական տեղափոխում է յոթանասունից **ութանասուն** (փխ.՝ ութսուն) ուղևոր» (մետրոյի աշխատակից):

Դարձվածի սխալ. օր.՝ «Ի՞նչ է, **ձեռք ես առնում** (փխ.՝ ձեռ ես առնում)» (պատգամավոր):

Անկապակցության օրինակ է հետևյալ նախադասությունը. «Գոնե **մեկ-մեկ միշտ** հետևում ենք նրա բաղադրատոմսին» (հաղորդավար):

Կրկնության օրինակ է հետևյալ նախադասությունը. «Շատ սահուն է **ընթանում** այդ **ընթացքը**» (երգիչ):

Սխալ են **ծաղկեփունջեր** հոգնակիի ձևը, ինչպես նաև **ոչ մեկ** դերանվան անհոդ կիրառությունը ու **չի կարա կանգնի** կառույցը: Օր.՝ «Ֆրանսիայում Վալենտինի օրվան ընդառաջ **ծաղկեփունջեր** (փխ.՝ ծաղկեփնջեր) են վաճառվում» (հաղորդավար): «**Ոչ մեկ** (փխ.՝ ոչ մեկը) **չի կարա կանգնի** (փխ.՝ չի կարող կանգնել)» (պատգամավոր): Սխալ են նաև՝ «Այս տարի բացվել են **տասերեք** (փխ.՝ տասներեք) մանկապարտեզ և կբացվեն ևս **տասերեքը** (փխ.՝ տասներեքը)» (համայնքապետ): «Դանակը **կարա** (փխ.՝ կարող է) **համ** (փխ.՝ և) օգտակար լինել, **համ** (փխ.՝ և) վնասել մեզ: Պետք է ճիշտ օգտագործել» (աշակերտի խոսքից): «Նա **ամենալավագույն** (փխ.՝ լավագույն) բժիշկն է» (բուժառուի խոսքից): Սխալ է երկու ածանցների (**ամենա-** և **-ագույն**) միաժամանակ գործածությունը նույն բառի մեջ: Պետք է լինի **ամենալավ** կամ **լավագույն**:

Ամփոփելով՝ կարելի է նշել, որ հեռուստահաղորդումներում հաճախակի են հնչում խոսակցական հայերենի **ա-**ով ձևերը օժանդակ բայի ներկա ժամանակի եզակի 3-րդ դեմքի **է-**ի փոխարեն, ինչպես նաև անվանաբայական բաղադրյալ ստորոգյալի հանգույցի դեպքում: Բաղադրյալ ստորոգյալի ժխտական հանգույց **չէ-**ի փոխարեն գործածում են **չի** ձևը: **Պետք է** եղանակիչի փոխարեն գործածում են **պետք ա** խոսակցական ձևը: Հաճախակի են գործածվում դերանվան (**ես, եղ, էն** և այլն) և դերանուն կապի խնդրի խոսակցական ձևերը (**իմ վրա, քո համար** և այլն): Վերոհիշյալ մեղանշումներից պետք է զերծ մնա «հայերենը՝ աստվածների հետ խոսելու լեզուն» (Ջ. Բայրոն):

Թելյան Լեոնիդ

ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան

լեզվի ինստիտուտի ավագ գիտաշխատող, Բ.Գ.Թ., դոցենտ

telyanleonid@ysu.am

ԼԵԶՎԱԿԱՆ ՆՈՐՄԻՑ ՇԵՂՈՒՄՆԵՐ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԼԵԶՎՈՒՄ

Զանգվածային տեղեկատվության միջոցները կարևոր (եթե չասենք վճռորոշ) դեր են կատարում հանրային գիտակցության, երկրորդաբար նաև տվյալ հանրության լեզվական մշակույթի ձևավորման գործում: Լեզվի կանոնարկման հարցերին նվիրված գիտական թեմայի շրջանակներում մենք հետևել ենք մեր լրատվամիջոցների, հատկապես հեռուստատեսային հաղորդումների լեզվին, արձանագրել տարբեր կարգի շեղումներ, որոնց մի մասը կփորձենք ստորև ներկայացնել որոշակի խմբավորմամբ և, ըստ հարկի, մասնագիտական մեկնաբանություններով:

Լրատվության լեզուն դիտարկելիս թերևս պետք է որոշակիորեն զանազանել մի կողմից՝ հեղինակների՝ լրագրողների, հաղորդավարների ու վերլուծաբանների, մյուս կողմից՝ տարբեր կարգի հաղորդումների մասնակիցների հիմնականում անկաշկանդ խոսքին վերաբերող իրողությունները՝ հաշվի առնելով հատկապես այս վերջին խմբի անմիատարր կազմը: Այնուամենայնիվ, լեզվական այս որակների դիտարկումը կարող է պատկերացում տալ տվյալ լեզվի կանոնի ու կիրարկության, դրանցում տեղի ունեցող տեղաշարժերի ընդհանուր միտումների մասին:

Բառագործածության սխալներ: Լինելով ընդհանուր առմամբ լեզվական ոչ բարձր մշակույթի նշան՝ այս կարգի շեղումներն ու սխալները տարբեր պատճառներ են ունենում՝ բառիմաստի ոչ ճիշտ ընկալում, հարանուն բառերի իմաստների շփոթում, բառի սխալ կազմություն, ավելորդաբանություն, ոճական անհամապատասխանություն համատեքստին, բաղարկություն, նաև չարդարացված օտարամոլություն՝ պայմանավորված ոչ հայկական կրթությամբ կամ լեզվական ցածր ճաշակով: Ստորև բերվող նմուշները հաճախ առնված են հանրային ոչ անհայտ գործիչների կամ հաղորդավարների խոսքից: «*Դժբախտ պատահար*». *այսպես է որակավորվել դեպքը*, *Այսպես է (փխ.՝ են) որակավորվել Խոջալուի իրադարձությունները* («Շանթ»), *Պահեստներից*

հավաքագրվել է 64 տոննա միրգ (նույնը), Ինֆորմացիան հավաքագրվում է մեր թեժ գծում: (Ընդհանրապես այս հարանուն գույգերի՝ հավաք(վ)ել-հավաքագր(վ)ել, որակ(վ)ել-որակավոր(վ)ել գործածության սխալները բավական տարածված են. որակավորել-ը (ռուս.՝ квалифицировать) գործածում են բնութագրել, գնահատել, իսկ հավաքագրել-ը (ռուս.՝ вербовать)՝ հավաքել, ժողովել իմաստներով): Այնուհետև. Օգտվիր քեզ ընձեռնված հնարավորությունից (ճիշտ է՝ ընձեռնված. սխալ են նաև՝ նախատեսել, նախատեսնված. չափազանցնել, չափազանցացնել ձևերը (ճիշտ են՝ նախատեսել, չափազանցել (հմմտ.՝ շրջանցել, գերազանցել, վազանցել, հորատանցել և այլն)): Անկաշկանդ խոսքում հազվադեպ չեն խաբնվել, կապնվել, խփնվել և այս կարգի՝ նորմի տեսակետից անընդունելի ձևերը: Ապա և՝ Չկարողացան խուսափել սննկացումից. («Կենտրոն»)-սնանկանալ, սնանկացում բառերի փոխարեն այս սխալ ձևերը ևս բավական տարածված են): Այս տարի մեր նախարարությունը մեկնարկել է մի շարք կարևոր ծրագրեր (մեկնարկել-ը չեզոք սեռի բայ է՝ սկսվել նշանակությամբ և նման համատեքստում չպետք է գործածվի):

Բառիմաստի սխալ պատկերացմամբ բացատրվող սխալների օրինակներ. Բյուջեն ուղղված է ընչաքաղց խավերի կարիքների բավարարմանը (պատգամավորի խոսքից), Մաքսային միություն մտնելով՝ չեմ կարծում, թե Եվրոպայի հետ մեր հույսերը ի թերևս կլինեն (ճիշտ կլինի՝ ի դերև կելնեն), Թող պոպովներն ու լավրովները խոսեն, ժամանակ առ ժամանակ թող հորջորջա (փխ.՝ հոխորտա) Ալիևը (հաղորդավարուհու խոսքից), Այդ օրը որոշել էր վառարանը դնել և իջել էր ձեղնահարկ (պետք է ասեր՝ ներքնահարկ կամ նկուղ), Մենք գնացել էինք հանգուցյալի ընտանիքին մեր ցավակցությունը ավետելու: Պատերազմի չմորմոքող վերքերից ժողովուրդը դեռ ուշքի չի եկել (Արմնյուզ) և այլն: Ահա և օտարաբանություններով խճողված մի նմուշ՝ երգչուհու խոսքից. Բմ այս կապույտ սապոժկիները համահունջ(՝) են սարոչեչկայիս հետ: Հետաքրքիր են երկու միավորների բաղարկության հետևանքով առաջացող անճիշտ բառագործածության դեպքերը: Այսպես Այսօր հնարավոր չէ Արցախի պատգամավորների հետ տեստ առ տեստ հանդիպում (փոխառյալ տեստ ա տեստ և հայերեն երես առ երես արտահայտությունների բաղարկությամբ), Իսկ ինչպե՞ս չընկնել էքստրասենսների թիրախը (թիրախ դառնալ և ծուղակն ընկնել դարձվածների բաղարկությամբ ստեղծվել է թիրախն ընկնել ոչ կանոնական ձևը), հաճախադեպ է նաև միօրինակացնել և

օրինականացնել ձևերի բաղարկությամբ կազմվող միօրինականացնել սխալ ձևը: Հանդիպում են նաև գրաբարյան որոշ քարացած ձևերի (հիմնականում ոճավորման համար կիրառվող) աղավաղումներ, ինչպես՝ *Ես ստիպեցի հարգեն բեմի մարդկանց ըստ արժավունս* (փխ.՝ *ըստ արժանվուն*). արձանագրել ենք նաև *արժանավուն* ձևը *արժանավոր*-ի փոխարեն. *Մեր ձայնը տանք արժանավուն թեկնածուին*), կամ՝ *Մենք պարտավոր ենք սիրել միմյանցս, Բայց ասված է, որ սիրել զմիմյանց* (Հ.1-ի հաղորդավարուհու խոսքից. երկու դեպքում էլ աղավաղվել է սուրբգրային *սիրեցեք զմիմեանս* պատգամը), նման կարգի՝ *Ձայն բարբառո, ձայն անապատի* (Շամշյան) և այլն:

Ձևակազմությանը վերաբերող շեղումներ: Նախ ներկայացնենք գոյականի հոգնակի թվի կազմության կանոնների խախտման օրինակներ. *Իրենց մոտ էլ առաջ են եկել այլախոհեր* («Արմենիա»), *Պիտեր Բալաքյանը ամերիկյան բանաստեղծների և հուշագրերի մեջ ամենատաղանդավորներից է* (Հ.1), *18-րդ դարում Հունաստանից հանքափորեր են եկել Հայաստանի և Ղարաբաղի պղնձահանքերում աշխատելու* (Հ.1), *Սպիտակ արջուկին կերակրել են անասնաբույժերը* («Շանթ»), *Որո՞նք են ամենալավ աշխատատեղերը, Սրահներում շատ են ստենդերը* («Շանթ»): Թվակազմությանը վերաբերող շեղումներ էլ կան, որոնք կապված են այսօր արդեն հնացած հոգնակերտ ձևայինների չճանաչման կամ անտեսման հետ: Այս առումով արժե նշել հետզհետե տարածվող մի սխալի մասին. -*անի* հին հոգնակերտով կազմված *ավագանի* բառը գիտակցվում է որպես եզակի՝ *ավագանու անդամ* նշանակությամբ, և սրանից էլ կազմում են *ավագանիներ* (իմա՝ *ավագանու անդամներ*) տարօրինակ ձևը (ի դեպ, նույն տրամաբանությամբ գործածում են *ժյուրիներ* սխալ ձևը՝ *ժյուրիի անդամներ* նշանակությամբ): Հաջող չէ, մեր կարծիքով, նաև *առաքանի* բառը, որ գործածվում է *փոստային առաքում*, *ծանրոց* նշանակությամբ: -*Այք* հոգնակերտ մասնիկի իմաստի անտեսման օրինակը կա հետևյալ նախադասության մեջ. *Այսօր խոսում ենք դեղորայքներից անվճար օգտվելու մասին* («Արմենիա») և այլն:

Գոյականի կամ դերանվան հոլովական ձևերի կազմության սխալներ էլ կան, ինչպես. *Համբուրգերը պատրաստում ենք ծովախեցգետնուց* (փխ. *ծովախեցգետնից*) («Արմենիա»), *Փորձել ե՞ք հարթել Ձեր հարաբերությունները Ձեր տալան* (փխ.՝ *տալոջ* կամ *տալի*) հետ («Կիսաբաց լուսամուտներ»), *Լրագրողներից ոչ ոքու* (փխ.՝ *ոչ ոքի*) *չէին թողնում ներս մտնել* (Շամշյան) և այլն:

Ձևաբանության ոլորտում նորմից շեղումներն առավելապես բայականության ու բայակիրառության կանոնների տարբեր բնույթի խաթարումներ են, որոնք հաճախ պայմանավորված են խոսակցական լեզվի կամ բարբառների ազդեցությամբ: Ահա բայական լծորդությունների շփոթից առաջացող սխալների օրինակներ. *Մրանք գլուխ են գովացել, որ կարող են երաժշտություն ստանալ*, (հաղորդավարի խոսքից), *Մեկուկես տարի տնացող բանակցություններից հետո նման շրջադարձը անհասկանալի է* (արտգործնախարարի խոսքից), *Մենք հիմա սահմանափակելու ենք, որպեսզի խեցգետինն ևս չորսեն*, *Նրա շուրջը ստեղծվել է հիացողների ու չարախնդողների մեծ բազմություն* (Հ.1), *Դուք չեք ցանկանա, որ ձեր շրջապատում օձեր վիստեն* (Շանթ), *Մեր տեսախցիկի որսած տեսարաները առանց մեկնաբանության* (Հ. 1), *Արագ վարգով սուրող օրերն անցնում են նրա կողքով*, *Վերջին խոսքը պետք է պատկանա Ադրբեջանին*, *Նոր գալացողներ կան Սիրիայից* և այլն:

Հայտնի է, որ գրական հայերենում պատճառականն *-եցն-*, *-ացն-* ածանցներն ավելանում են համապատասխանաբար *ե* և *ա* լծորդության բայերին, սակայն խոսակցական լեզվում տարածված է *-ացն-* ածանցի գործածումը *-եցն-*ի փոխարեն (*հաջողացնել*, *սովորացնել*, *աշխատացնել* և այլն): Այս երևույթը հաճախ ներթափանցում է գրական լեզու և բավական հաճախադեպ է զանգվածային լրատվության լեզվում, ինչպես. *Դա մարդկանց վախացնելու* (փխ.՝ *վախեցնելու*) *միջոց է*, *Չե՞ք վախենում հոգնացնել* (փխ.՝ *հոգնեցնել*) *հանդիսատեսին* և այլն: Միաժամանակ, որպես այսպիսի սխալներից խուսափելու չափազանցված ճիգի դրսևորում, գործածում են *-եցն-* ածանցը կանոնական *-ացն-*ի փոխարեն: Ահա այս իրողության «բնագրային» վկայություններ. *Ես իմ առջև դնում եմ խնդիրներ և ամեն անգամ դժվարեցնում եմ* (փխ.՝ *դժվարացնում եմ*) *այդ խնդիրները*, *Դուք ֆիզիկապես տկարեցնում եք* (փխ.՝ *տկարացնում եք*), *Մենք սիրում ենք ուռճեցնել* (փխ.՝ *ուռճացնել*) *դիմացինի պրոբլեմները*, *Մարդիկ գալիս են համերգի մեծ սպասումներով, և պետք է արդարեցնել* (փխ.՝ *արդարացնել*) *այդ սպասումները* («Արմենիա») *Խոնավեցնող* (փխ.՝ *խոնավացնող*) *շամպուն* (գովազդ) և այլն: Պատճառական բայերի կազմության հետ կապված արժե հիշեցնել թերևս, որ ճիշտ է դրանց անցյալ կատարյալի վերջավորությունները (*-ի*, *-իր* և այլն) ավելացնել այսպես կոչված բեական (*հիշեցրի*, *խոսեցրի* և այլն), ոչ թե ցոյական (*հիշեցրեցի*, *խոսեցրեցի* և այլն)

հիմքին: Այնուհետև, նորմի տե(սակետից մերժելի են *տալ* բայի հարադրությամբ կազմվող ձևերում նաև պատճառական ածանցների զուգահեռ կիրառությունները՝ *զգացնել տալ*, *հիշեցնել տալ* (փխ.՝ *զգացնել*, *հիշեցնել* կամ էլ՝ *զգալ տալ*, *հիշել տալ*) և այլն:

Շարահյուսական նորմից շեղումներ: Սրանք հիմնականում կապակցության եղանակների ու միջոցների՝ համաձայնության, խնդրառության, կախման, շարադասության, կապերի ու շաղկապների կիրառության ոլորտներին են վերաբերում: Տեղեկատվության լեզվում սրանք բազմազան դրսևորումներն ունեն և բավական հաճախադեպ են: Կներկայացնենք միայն: մի քանի բնորոշ դեպքեր:

Համաձայնության սխալներ- *Մեր գյուղի բնակիչներից ոչ մեկը չեն լքել գյուղը Պարզվում են միջադեպի հետ կապ ունեցող մարդկանց ինքնությունը* (Հ. 1), *Շատ ճանապարհներ կար, որ բացել է Ջահուկյանը* (լեզվաբանի խոսքից), *Այստեղ իրավականը և քաղաքականը խառնվեց* («Երկիր մեդիա») *Մենք գիտակցում ենք, որ կենսաթոշակների չափը մեր թոշակատուների կենսապահովմանը չեն կարող բավարարել Եթե այդ սպասումները չարդարացվի, նորից լինելու է հիասթափություն* և այլն: Այստեղ թերևս պետք է ներկայացվեն նաև այն շեղումները, որոնք թեև համաձայնության եղանակին չեն հատկացվում, սակայն որոշակի համապատասխանություն են ենթադրում որոշի իմաստի և որոշյալի քերականական թվի (եզակի կամ հոգնակի) միջև: Այսպես, օրինակ, *բոլոր, բազմաթիվ, մի քանի, ինչ-ինչ, մեծ-մեծ, զույգ-զույգ, խումբ-խումբ* և այս իմաստային խմբի այլ որոշիչների հետ գործածվում են եզակի, իսկ *ամեն (մի), ոչ մի, յուրաքանչյուր, որևէ, որևիցե* և այլ այս կարգի որոշիչների հետ՝ եզակի որոշյալներ, մինչդեռ հետևյալ օրինակներում այս կանոնը պահպանված չէ. *Եթե ինչ-ինչ պատճառով ձեր ուտեստը համով չի ստացվել, դիտեք «Համով զրույցը», Ցուցարարների ոչ մի հարցերի քաղաքապետը չի պատասխանել, Եթե ինտերնետով որևէ նամակներ եք ստանում, ստուգեք...* (Շանթ), *Բոլոր աշխարհում կան չափանիշեր, որոնցով կատարում են վիրահատություններ* (բժշկի խոսքից), *Ամբողջ աշակերտները մասնակցել են դասադուլին, Ես ոչ մեկի հասցեին որևէ ակնարկներ չեմ անում, Տարածաշրջանի ողջ երկրրները անհանգիստ վիճակում են, Այս կինը «Դե յաման» երգը այնքան հուզիչ կատարեց, որ ամբողջ հանդիսատեսները ոտքի կանգնեցին* (համացանց) *Այդ ողջ փաստաթղթերը պատրաստվել էին ժամանակին, Ոչ մի վերապահումներ չենք անելու* և այլն:

Խնդրատական շեղումներ: Արդի հայերենի շարահյուսական նորմի պահանջներից մեկը վերաբերում է անորոշ դերբայի գործիական հոլովով կազմված դերբայական դարձվածներով նախադասություններին: Դեռևս Մ. Աբեղյանն էր «զգուշացնում» որ սրանցում «դերբայը և խոսքի բայը (իմա՝ ստորոգյալը-Լ. Թ.) միշտ միևնույն ենթական ունին»¹, բայց այսօր էլ այս կանոնը շատ հաճախ է խախտվում, ինչպես. *Լինելով Տիգրան Երկրորդի կրտսեր որդին՝ Արտավազդ Երկրորդին պատրաստում էին ոչ որպես գահակալի....(ֆիլմից), Եվ, իհարկե, լինելով շատ գեղեցիկ և համակրելի, ես ուզում եմ քեզ նվիրել այս ծաղկեփունջը («Շանթ»), Խոսելով օգտակար սննդամթերքների մասին, մեր սեղանին այսօր դրված է ոլոռը («Շանթ»), Յուրաքանչյուր ոք, իր լուման ներդնելով, փառատոնը կայանում է («Երկիր մեղիա») և այլն:*

Անորոշի գործածության հետ կապվող բազմաթիվ անկանոնություններից ևս մեկը հաճախ է հանդիպում լրատվության լեզվում: Խոսքը վերաբերում է կերպավորող իմաստ արտահայտող որոշ բայերի (*սկսել, շարունակել* և այլն) և անորոշ դերբայի գուգորդումով առաջացող կառույցներին, որոնցում կրավորական ածանցը պետք է ավելանա միայն անորոշ դերբային՝ որպես հիմնական գործողություն արտահայտող միավորի, ինչպես՝ *Շենքը շարունակում են կառուցել* և *Շենքը շարունակում է կառուցվել*, մինչդեռ -վ- կրավորական ածանցը հաճախ կրկնում են նաև կերպավորիչ բայի մեջ: Օրինակներ. *Մեծ թափով սկսվում է կառուցվել Երևանը (Հ. 1), Գորիս-Ստեփանակերտ ճանապարհը շարունակվում է արգելափակված մնալ («Շանթ»), ՀԱՊԿ գլխավոր քարտուղարի հարցը շարունակվում է քննարկվել (Արմնյուզ), ԱՄԾ-ի պետը և ոստիկանապետը կշարունակվեն նշանակվել կառավարության կողմից (Հ. 1) Դանդաղ սկսվեցին ձևափոխվել քաղաքի ավանդույթները (Հ. 1) և այլն:*

Այնուհետև, երբեմն փորձում են կրավորական կառուցվածքի նախադասություն կազմել այնպիսի բայերով, որոնք չեզոք սեռի են և, որպես այդպիսիք, -վ- ածանց չեն կարող ընդունել, ինչպես *Եթե այսօրվա դիրքերից են մոտեցված թատերական նյութին, ապա դա արդարացված է (Հ. 2, «Չէին սպասում»), Դա իմ ամենասիրած պարն է, որ պարվում է ծրագրի վերջում (Շողակաթ), Գյուղացիների ցանկացած խնդրանք Միքայել Վարդանյանի կողմից ընդառաջվել է (Հ. 1), Շտապում եմ հանդիպել իմ կողմից շատ կարոտված Սյուզիին («Տնից հեռու») և այլն:*

¹ Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Ե., 1965, էջ 406:

Օտարաբան շարահյուսական կառույցների անհաջող պատճենումների օրինակներ են հետևյալ նախադասությունները. *Ինձ կանչվեց ԱՄԾ և ասվեց, որ այլևս չեմ կարող աշխատել* («Կենտրոն»), *Ես շատ լավ լուրով եմ զանգել* («Արմենիա»), *ԵՏՀ երկրները չպետք է չարաշահեն իրենց դիրքով* (Հ. 1), *Այսինքն Դուք խնդիր չունե՞ք հերոսով* (Հ. 1):

Խնդրառական տարածված անճշտություններից են կապերի սխալ խնդրառությունը և կապերի ու շաղկապների իմաստային ոչ ստույգ կիրառությունները: Բավարարվենք այդ կարգի մի քանի բնորոշ դեպքերի վկայակոչմամբ. *Ամեն ինչ արված է ըստ օրենքի տառով* («Շանթ»), *Կարո՞ղ եմ առանց դատարանի միջնորդությամբ ամուսնալուծվել* (Հ.1), *Ըստ նրա հայտարարությամբ՝ սահմանադրությունը կարված է* (Հ. 2), *Ես հաղորդումը պատրաստում եմ իմ մի քանի օգնականների հետ հանդերձ* (Հ.1), *Մասնակիցների համար անմոռանալի էր այցելությունը դեպի Արցախ* («Շանթ»), *Գիտելիքների ի՞նչ պաշար պիտի ունենա երեխան՝ քացի անգլերենի իմացության* («Արմենիա»), *Ջրի ճնշումը ուժեղ է, մինչև պոմպը չեն անջատել* (Հ. 2), *Մեր հարևան երկիրը ոչինչ չի խնայում գործելու ի դեմ Արցախի* (Հ.2), *Քննարկումներ առայժմ չեն կարող լինել, մինչդեռ կառավարությունից նախագծեր չբերեն* («Շանթ») և այլն:

Հայերեն տեղեկատվության միջոցներում լեզվական տարատեսակ մեղանչումների, վրիպումների թվարկումն ու վերլուծումը կարելի է երկար շարունակել: Դրանց մենք ծրագրում ենք անդրադառնալ մեր հետագա հրապարակումներում:

ՀՀ-Ի «ԼՐԱԲԵՐ» ՀԱՂՈՐԴԱՇԱՐԻ ԼԵԶՎԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Լեզուն մեր հայրենիքն է և կարիք ունի ամենօրյա հոգածության: Հայերենի անադարտությունն ու լեզվական օրինաչափությունների պահպանումը բոլորիս հիմնական խնդիրն է:

Մենք ուսումնասիրության նյութ ենք դարձրել հեռուստաթերթը, քանի որ, ինչպես գիտենք, հեռուստատեսությունը զանգվածային հաղորդակցության այն գործիքներից է, որ հանրության լեզվամտածողության ձևավորման վրա մեծ ազդեցություն են ունենում: Ընտրել ենք ՀՀ հեռուստաալիքը, քննել «Լրաբեր» լրատվական հաղորդաշարի լեզվական դաշտը՝ բացահայտելու լեզվաոճական անճշտությունները: Քննությունը ընդգրկում է 2025 թվականի հունվար-փետրվար ամիսներին հեռարձակված տասնութ թողարկում:

Խոսողի լեզվամտածողությունը, մայրենիի թերիմացությունը, օտար կառույցի ընդօրինակումը հանգեցնում են լեզվաոճական սխալների:

Մեր ուսումնասիրած հաղորդաշարում անճշտությունները բազմաբնույթ են: Նկատելի են բառաձևերի սխալ գործածություններ, ավելորդ բառերի, օտարաբանությունների, օտարաբան կառույցների կիրառություններ, խնդրառության, համաձայնության, շարադասության, ինչպես նաև բարդ նախադասության բաղադրիչների կապակցման ոչ կանոնական դրսևորումներ:

Սխալ բառագործածություններ:

Բառի կազմության չիմացության պատճառով **յոթապատիկ** ձևն է գործածվում **յոթնապատիկ**-ի փոխարեն:

- *Դատապարտվել է տուգանքի՝ նվազագույն աշխատավարձի **յոթապատիկի** չափով (13.01.2025):* → Դատապարտվել է տուգանքի՝ նվազագույն աշխատավարձի **յոթնապատիկի** չափով:

Բառաձևերի, բայաձևերի սխալ գործածությունները առաջ են գալիս քերականական տարբեր օրինաչափությունների խախտման հետևանքով:

Ժամանակ ցույց տվող մի շարք բառեր ներգոյական հոլով չունեն, ուստի հետևյալ նախադասությունում հանձնարարելի է տրական հոլովով արտահայտված բառի գործածությունը.

- **Տարեսկզբում** Չինաստանում է եղել (05.02.2025): → **Տարեսկզբին** Չինաստանում է եղել:

Անօրինաչափ են պատճառական բայերի կրկնակի **ց**-ով կազմությունները (**հի-շեցրեցին, վերցրեցին**).

- *Լրագրողները Մանասյանին Փաշինյանի բառամթերքը հիշեցրեցին* (06.02.2025):
→ Լրագրողները Մանասյանին Փաշինյանի բառամթերքը **հիշեցրին**:
- *Զենք վերցրեցին* (28.01.2025): → **Զենք վերցրին**:

Այս բայերի անցյալ ժամանակաձևը կազմվում է **-եցն-**, **-ցն-** ածանցների վերջնահնչյուն **ն**-ն **ր**-ի փոխելով:

Կապերի ու շաղկապների ոչ ճիշտ ընտրություն:

Քերականական իմաստ արտահայտող բառերի սխալ գործածությունը խաթարում է խոսքի տրամաբանականությունը:

- *Իշխանությունը թալանվողին ստիպում է մասնակցել իր իսկ հանդեպ գործողությանը*(18.01.2025):→*Իշխանությունը թալանվողին ստիպում է մասնակցել իր իսկ դեմ ուղղված գործողությանը*:
- *Պատմական մի դրվագ է՝ խտացված, որ նաև ամոթի զգացողություն է առաջացրել ֆիլմը դիտողների մոտ*(13.01.25):→ *Սա պատմական մի դրվագ է՝ խտացված, որն առաջացրել է ամոթի զգացողություն ֆիլմը դիտողների մեջ*:

Կամ՝

- *Փաշինյանական իշխանությունն ամեն օր մի բան է ասում, իսկ իրականություն են դառնում ադրբեջանական հայտարարությունները*(10.01.25): → *Փաշինյանական իշխանությունն ամեն օր մի բան է ասում, բայց իրականություն են դառնում ադրբեջանական հայտարարությունները*:

Վերոբերյալ նախադասության երկրորդ բաղադրիչում արտահայտված իրողությունը չի բխում առաջին նախադասության մեջ արտահայտվածից, հակասում է վերջինիս, ուստի կանոնական է **բայց** -ի գործածությունը:

- *Դժվար է ընդունել, բայց արդեն մեկ տարի է՝ նա մեզ հետ չէ* (06.02.25) :→ Դժվար է ընդունել, **որ** արդեն մեկ տարի է՝ նա մեզ հետ չէ:

Բայց-ի փոխարեն ճիշտ է **որ** շաղկապի գործածությունը, ինչը պայմանավորված է երկրորդական նախադասության կատարած պաշտոնով:

- *Իսկ դրանց հանձնումը ոչնչացնելու է ոչ միայն ներքին կոմունիկացիաները, այլ հարվածի տակ է դնելու մայրուղին և գազատարը*(17.01.25):→Իսկ դրանց հանձնումը **ոչ միայն** ոչնչացնելու է ներքին կոմունիկացիաները, **այլև** հարվածի տակ է դնելու մայրուղին ու գազատարը:

Այլ -ի փոխարեն՝ **այլև**, քանզի հակադրվում է **ոչ միայն**-ին:

- *Ասել են, թե խնդիր է* (06.02.25): → Ասել են, **որ** խնդիր է:

Թե շաղկապը գործածվում է թեական իմաստ արտահայտող բայերի հետ, իսկ **որ**-ը՝ հաստատական (ասել):

Ավելորդաբանություններ և բառերի անհարկի գործածություն:

Որոշ նախադասություններում ավելորդ բառեր են գործածվում.

- *Այդ նկարահանող սարքերը եղել են գյուղապետին պատկանող տանը* (20.01.2025): →Այդ սարքերը գտնվել են գյուղապետի տանը:

Անօրինաչափ է **հետ** և **միասին** բառերի համատեղ գործածությունը.

- *Նիկոլ Փաշինյանի հետ միասին տրանսպորտի թանկացման պատասխանատվությունը կիսում է Արմեն Սարգսյանը*(21.01.25):→Նիկոլ Փաշինյանի **հետ** տրանսպորտի թանկացման **պատասխանատվությունը** կրում է Արմեն Սարգսյանը:

Պատասխանատվությունը կիսել կապակցության փոխարեն օրինաչափ է գործածել **պատասխանատվություն կրել** կառույցը:

Նույն հասկացությունը տարբեր ձևային արտահայտություններով կողք կողքի հաճախ անտեղի կրկնվում է:

- **Մենք կարող ենք միասին հոգ տանել մեր համատեղ ազգային շահերի պաշտպանության հարցերով** (30.01.2025): → Մենք կարող ենք միասին պաշտպանել մեր ազգային շահերը:

Այս նախադասության մեջ կա մի քանի սխալ: **Մենք** և **միասին** բառերի կրկնությամբ ընդգծվում է համատեղ գործելու գաղափարը, ուստի ավելորդ է **միասին** բառի գործածությունը: Ավելորդ է նաև **համատեղ** բառը, քանի որ **մեր**-ը արդեն ենթադրում է խմբային գործողություն:

Վերջին շրջանում գործածական է դարձել «**և ոչ միայն**» կառույցի անհարկի գործածությունը նախադասությունների վերջում, ինչպես՝

- Իրանի դեսպանը մեկնաբանել է Երևանի հրապարակում արված սկանդալային տեսագրությունը **և ոչ միայն** (06.02.25):
- Հայաստանում շարունակվում են շրջանառվել գրիպի A տեսակի H1 ենթատեսակի հարուցիչները **և ոչ միայն** (06.02.25):
- *Կաթնամթերքի վաճառքի կանոնակարգումից մինչև կուտակային կենսաթոշակային ֆոնդեր* **և ոչ միայն, հարցերը ... քննարկվել են Ազգային ժողովի նիստում** (21.01.25): → Ազգային ժողովի նիստում քննարկվել են ինչպես կաթնամթերքի վաճառքի կանոնակարգման, այնպես էլ կուտակային կենսաթոշակային ֆոնդերի և այլ հարցեր:

Քերականական ավելորդաբանություն է, երբ բառը անհարկի ստանում է քերականական մասնիկ: Պետք է խուսափել անհարկի հոդերից:

- **Խորը** ինտեգրային ծրագրեր է իրականացնում (14.02.25): → Ինտեգրային **խոր** ծրագրեր է իրականացնում:
- **Խորը** դիմադրության պայմաններում... (14.02.25): → **Խոր** դիմադրության պայմաններում....

Նախադասության անդամների ոչ ճիշտ կապակցություն: Խնդրառական սխալներ:

Լրագրողների խոսքում տարածված են կապակցվող բառերի խնդրառական սխալները: Հետևյալ նախադասություններում կապային կառույցի փոխարեն կանոնական է հոլովաձևով արտահայտված բառի գործածությունը.

- *Քաղաքացին չի հարմարվում թանկացումների հետ* (06.02.25): → Քաղաքացին չի հարմարվում **թանկացումներին**:
- *Փաշինյանը Վաշինգտոնից վերադարձել է՝ առանց հասկանալու, թե ինչ ակնկալել նոր վարչակազմից, այդ թվում՝ ռազմավարական ընկերային **խարտիայի վերաբերյալ*** (08.02.2025): → Փաշինյանը Վաշինգտոնից վերադարձել է՝ առանց հասկանալու, թե ինչ ակնկալել նոր վարչակազմից, այդ թվում՝ ռազմավարական ընկերային **խարտիայից**:
- *Մեղադրող կողմը և դատարանը չեն առարկել **միջնորդության դեմ*** (10.02.25): → *Մեղադրող կողմը և դատարանը չեն առարկել **միջնորդությանը***:
- ***Բիզնեսի հետ** նոր կարգավորումները գործադիրը չի քննարկել* (13.01.25): → Գործադիրը չի քննարկել **բիզնեսին առնչվող** նոր կարգավորումները:

Առկա է նաև հակառակ իրողությունը՝ կապային կառույցի փոխարեն հոլովաձևի գործածություն.

- *Արցախի **կորստով** տնտեսական կորուստն ինչ չափի է հասնում* (13.01.2025): → Արցախի **կորստի պատճառով** տնտեսական կորուստն ինչ չափերի է հասնում:

Կամ՝ մի հոլովաձևի փոխարեն այլ հոլովաձևի կիրառություն.

- *Մահափորձի **նախապատրաստումը** մի քանի մարդ է **ներգրաված եղել*** (03.02.2025): → Մահափորձի **նախապատրաստմանը** մի քանի մարդ է **ներգրաված եղել**:

Անորոշ դերբայով արտահայտված հետադաս հանգման խնդիրը հաճախ գործածվում է ոչ թե սեռական-տրական հոլովով, այլ ուղղական-հայցականով .

- *ՄԻՊ-ը **տրամադրված չէ** այդ դրվագները **քննարկել*** (06.02.25): → ՄԻՊ-ը **տրամադրված չէ քննարկելու** այդ դրվագները:
- ***Հնարավորություն կտա ծանոթանալ բոլոր առաջարկներին*** (21.01.25): → Այն **հնարավորություն կտա ծանոթանալու** բոլոր առաջարկներին:
- *Վրաստանը միշտ **պատրաստ է եղել աջակցել** տարածաշրջանի կայունությանն ու խաղաղությանը* (30.01.2025): → Վրաստանը միշտ **պատրաստ է եղել աջակցելու** տարածաշրջանի կայունությանն ու խաղաղությանը:

Թվային համաձայնության սխալներ:

Բազմակի ենթակաների հետ ստորոգյալը գործածվում է եզակի թվով, որը անօրինա-
չափ է.

- *Պետական միջոցների կառավարման օրինականացման և արդյունավետության վերահսկումը, հնարավոր չարաշահումների բացահայտումը, կանխումը դառնալու է առավել արդյունավետ* (03.02. 2025): → Պետական միջոցների կառավարման օրինականացման և արդյունավետության **վերահսկումը**, հնարավոր չարաշահումների **բացահայտումը, կանխումը** դառնալու **են** առավել արդյունավետ:

Ենթակայի և ստորոգյալի անհամաձայնության սխալները նկատելի են հիմնականում այնպիսի կապակցություններում, որոնցում ստորոգյալը գործածված է լինում առաջադաս, հաճախ էլ արտահայտված **վ** ածանց ունեցող բայով:

- *Ազատ արձակվածների թվում կա 69 կին և 21 դեռահաս* (20.01.2025): → Ազատ արձակվածների թվում **կան** 69 կին և 21 **դեռահաս**:

- *Ջարդվել է խորանում գտնվող սուրբ սեղանը և խաչակալը* (08.02.2025): → **Ջարդվել են** խորանում գտնվող սուրբ **սեղանը** և **խաչակալը**:

Երկբաղադրիչ նախադասությունում ստորոգյալի անհամաձայնություն:

- *Այնպիսի սերունդ է կրթել, որ իրենից հետո գործը շարունակելու են:*

Ստորադաս բաղադրիչի **շարունակելու են** հոգնակի ստորոգյալը թվով չի համաձայնում գերադաս նախադասության եզակի թվով արտահայտված **սերունդ** բառին, որին լրացնում է:

Հայերենում որոշ բառեր, իմաստային առանձնահատկություններով պայմանավորված, պահանջում են կա՛մ եզակի, կա՛մ հոգնակի թվով լրացյալ:

Միակ բառի գործածությունը հոգնակի լրացյալի հետ սխալ է.

- *Չեն հետազոտել միակ նկարահանող սարքերի տեղեկատվությունը* (20.01.2025): → Չեն հետազոտել **միակ** նկարահանող **սարքի** տեղեկատվությունը:

Շարադասական սխալներ:

Բառական միավորների սխալ դասավորությամբ կա՛մ փոխվում է բաղադրիչների ներքին իմաստային հարաբերությունը, կա՛մ աղավաղվում է այն.

- *Հայտնել է, որ ձորում նկատել է շրջված վիճակում գտնվող ընկերոջ «Հոնդա» մեքենան (13.01.25):*→ Հայտնել է, որ ձորում նկատել է ընկերոջ «Հոնդա» մեքենան՝ շրջված վիճակում:

Բարդ նախադասության մեջ բաղադրիչ նախադասությունների սխալ համակցումը խաթարում է բաղադրիչ մասերի իմաստային-քերականական հարաբերակցությունը:

- *Իրական Հայաստանն է լինելու Փաշինյանի քարոզարշավի հիմնական գաղափարը 2026-ի ընտրություններին, ուր նա ակնկալում է, որ մարդիկ կհամախմբվեն իր տեսլականի շուրջ (14.02.25):* → **2026-ի ընտրություններին** Փաշինյանի քարոզարշավի հիմնական գաղափարը լինելու է «Իրական Հայաստանը», որտեղ նա ակնկալում է, որ մարդիկ կհամախմբվեն իր տեսլականի շուրջ:

Օտար բառերի, շարահյուսական օտարաբան կառույցների սխալ գործածություն:

Լրաբերի եթերները ողողված են օտար բառերի և արտահայտությունների գործածությամբ, ինչը չի համապատասխանում հաղորդման ձևաչափին և հակասում է լեզվական նորմին: Հաճախակի է **սանկցիա** (պատժամիջոց), **սկանդալ** (արտառոց), **դիսկուրս** (խոսույթ), **կոմունիկացիա** (հաղորդակցություն) բառերի գործածությունը:

- *Դատավորը սանկցիա կիրառեց նրա նկատմամբ (30.01.2025):*
- *Իլոն Մասկը սկանդալային պնդում է արել (03.02.2025):*
- *Սկանդալային տեսագրություն (06.02.2025):*
- *Բանակը հանրային-քաղաքական դիսկուրսում քննարկվում է... (08.02.2025):*

Պաշտոնական և տեղեկատվական հաղորդման ընթացքում խոսակցական լեզվի տարրերի գործածումը ցանկալի չէ:

- *Քաղաքային իշխանությունները լայշա են կախում բոլորիս ականջներից (05.02.2025):*

Օտար լեզուներից, հիմնականում ռուսերենից (վերջին շրջանում նաև անգլերենից) կամ ռուսերենի միջնորդությամբ ընդօրինակվում են շարահյուսական օտարաբան կառույցներ: Հայերեն բառերով, բայց օտար կաղապարներով խոսքի կառուցումը ընդունելի չէ:

- *Տուժածներից ոչ մեկին վիրահատություն չի պահանջվել* (Операция не потребовалась) (03.02. 2025): → Տուժածներից ոչ մեկը **վիրահատության կարիք չունի**:
Ռուսաբանություն է **գնում է** բառի գործածությունը հետևյալ արտահայտություններում:

- *Քննարկումը գնում է միջազգային տրամաբանության շուրջ* (Идет вокруг международной логики) (13.01.25): → **Քննարկումը վերաբերում է** միջազգային տրամաբանությանը:

- *Պատրաստվում է կենսական զիջումների գնալ* (идти на уступки)(03.02.2025): → Պատրաստվում է կենսական **զիջումներ անել**:

- *Սա այն հարցն է, որ ոչ մեկի հետ գործարքի չենք գնա* (Не пойдем на сделку) (06.02.2025): → Սա այն հարցն է, **որի շուրջ ոչ մեկի հետ գործարք չենք կնքի**:

Օտար լեզվի ազդեցության անմիջական վերարտադրություն են **գոյականի, դերբայի սեռական-տրական հոլովաձև+տեսքով, մասով** (в виде, по части) կադապարով կառույցները:

- *Փոփոխություններ են լինելու՝ կրճատվելու տեսքով* (в виде сокращения) (05.02.2025): → Կրճատումներ են լինելու:

- *Եկամուտները հայտարարագրելով կլցնեն բյուջեն և վարկերի տեսքով* (в виде кредитов) *կվերադարձնեն քաղաքացիներին* (30.01.2025): → *Եկամուտները հայտարարագրելով կլցնեն բյուջեն և որպես վարկ կվերադարձնեն քաղաքացիներին*:

- *Դեսպանին խնդրում են ներկայացնել Հայաստանի առաջ քաշած Խաղաղության խաչմերուկի մասով* (по части перекрёстка мира) *Իրանի դիրքորոշումը* (06.02.2025): → Դեսպանին խնդրում են ներկայացնել Իրանի դիրքորոշումը Հայաստանի առաջ քաշած **Խաղաղության խաչմերուկի վերաբերյալ**:

Նախադասության ոչ ճիշտ կառուցվածքներ, անհաջող ձևակերպումներ:

- *Վաղ առավոտյան թանկարժեք պետական մեքենաները, իրար հերթ չտալով, Եռաբլուր էին բերում իշխանականներին, նրանց մեջ՝ Փաշինյանը* (28.01.2025): → Վաղ առավոտյան թանկարժեք պետական մեքենաները, իրար հերթ չտալով, Եռաբլուր էին բերում իշխանականներին, **այդ թվում՝ Փաշինյանին**:

- *Եթերում Փաշինյանը երկար խոսեց հայտարարագրումից և մեկ նախադասություն՝ քանակի տոնին (28.01.2025):*→ Եթերում Փաշինյանը երկար խոսեց հայտարարագրումից, իսկ **քանակի տոնին** նվիրված միայն մեկ նախադասություն ասաց:
- *Ինչպես են նրանք հարգանքի տուրք մատուցել Եռաբլուրում, լրատվամիջոցների համար փակ էր(28.01.2025):*→Լրատվամիջոցներին արգելված էր լուսաբանել, թե ինչպես են նրանք հարգանքի տուրք մատուցել Եռաբլուրում:

Տրամաբանական բնույթի սխալներ:

Աղավաղված է այն խոսքը, որ չունի բաղադրիչների միասնություն, որում հաճախ փոխկապակցված չեն բառերը.

- *44-օրյա պատերազմից չհուղարկավորված մարմիններից փոքրաթիվ դեպքեր կան, որ վերջին շրջանում են հուղարկավորվել(10.01.25):* → 44-օրյա պատերազմից չհուղարկավորված **մարմիններից** միայն մի քանիսն են վերջերս **հուղարկավորվել**:
- *Ընդդիմության կողմնակիցները ցանկացել էին փակել միջազգային ճանապարհը, որը տանում և դուրս է գալիս Թբիլիսի՝ «Թբիլիսի Մոլ» կենտրոնի մոտ (03.02. 2025):*→ Ընդդիմության կողմնակիցները ցանկացել էին փակել միջազգային ճանապարհը, որը **տանում է դեպի Թբիլիսիի «Թբիլիսի Մոլ» կենտրոն**:

Այստեղ «տանում» և «դուրս է գալիս» բայերը տրամաբանական կապ չունեն, քանի որ ճանապարհը չի կարող միաժամանակ «տանել» (ներս մտցնել) և «դուրս գալ» (հակառակ գործողություն):

Թերի կապակցություններ:

- *Բնակչին մերժել են տրամադրել սոցքարտ՝ ստորագրության վրա եղած Արարատ լեռան պատճառով (06.02.25):* → Բնակչին մերժել են տրամադրել սոցքարտ՝ **ստորագրության վրա** Արարատ լեռան պատկերի առկայության պատճառով:
- *Դեռ 50 տարեկան, հաճախ էր խոսում մահվան մասին, բայց մահից չվախենալով՝* → Դեռ 50 տարեկան **էր**, հաճախ էր խոսում մահվան մասին, բայց **մահից չէր վախենում**:

Հեռուստահաղորդումների մեջ գործածվող լեզվական սխալները կարող են լուրջ ազդեցություն ունենալ հանրության լեզվամտածողության, կրթության, հաղորդակցման մշակույթի և նույնիսկ ազգային ինքնության վրա: Հասարակությունը հաճախ չի գիտակցում լեզվական սխալների ազդեցությունը, որը աստիճանաբար ձևավորում է խոսքի ընդհանուր որակը: Այդ իսկ պատճառով կարևոր է ԶԼՄ-ներում ուշադրություն դարձնել լեզվական և ոճական նորմերի պահպանմանը՝ հանրային լեզվամշակույթը պահպանելու և զարգացնելու համար:

ԼԵԶՎԱԿԱՆ ՇԵՂՈՒՄՆԵՐ

(«5-րդ ալիք» հեռուստաընկերություն)

Հայաստանի Հանրապետության պաշտոնական լեզուն գրական հայերենն է, սահմանված են լեզվաքաղաքականության հիմնական դրույթները, լեզվավիճակն ու լեզվահարաբերությունները կարգավորող նորմերը: Սակայն օրենսդրական նորմերի և իրավական ակտերի խախտումները, ցավոք սրտի, դարձել են համատարած և գրեթե անվերահսկելի: Սովորական են դարձել գրական լեզվի աղավաղումները, որոնք թափանցել են ինչպես լրատվամիջոցների լեզուն, այնպես էլ հասարակության որոշ շերտերի և, որ ավելի ցավալի է, մտավորականության, անգամ գիտական աստիճան ու կոչում ունեցող անձանց լեզուն: Ցավալի է, որ աղավաղված տարբերականները մուտք են գործում դասագրքեր, գրքեր և այդ ձևով հրամցվում հասարակությանը, դառնում ընդօրինակման առարկա: Լեզվական աղավաղումների պատճառները տարբեր են: Լեզվական խեղաթյուրումները պայմանավորված են մի կողմից՝ կրթական համակարգում առկա բացթողումներով, որոնք տարբեր բնույթի են, դրանց հետևանքով շատերի կողմից գրական հայերենի կանոնների, նորմերի չիմացությամբ, մյուս կողմից՝ օտար բառերի ազդային համարժեքների չիմացությամբ, ինչ-որ տեղ նաև ուսման նկատմամբ հետաքրքրության անկմամբ, ընթերցասիրության պակասով, համակարգչի, համացանցի, հեռուստատեսության և զվարճանքի այլ վայրերի բացասական ազդեցությամբ: Բավականին ցավալի է նաև հասարակության մի զգալի շերտի, առանձնապես երիտասարդության՝ սեփական արժեքներն ըստ արժանվույն չգնահատելու, քաղքենիական պատկերացումներով պայմանավորված օտարամոլությամբ տառապելու անցանկալի երևույթը, որի պատճառով մեր **բարի լույս**-ը դարձել է **պրիվեա, շնորհակալություն**-ը՝ **մերսի, պարզ է, հասկանալի է**-ն՝ **օքեյ**: Այս ամենի հետևանքով այժմ, քան երբևէ, զգացվում է սեփական լեզվի նկատմամբ ինքնավերահսկման խիստ անհրաժեշտություն: Եվ եթե հասարակությունը, այնուամենայնիվ, գրական լեզվի հանդեպ հանդես է բերում

անխնամ, անփույթ վերաբերմունք և անտարբերություն, ուրեմն հարկավոր է գործուն միջոցներով ազդել նրա լեզվական ինքնագիտակցության վրա՝ այդ գործին ծառայեցնելով ողջ կրթական համակարգը, հրապարակային ելույթները, հանդիպումները, տարաբնույթ միջոցառումները և իհարկե, զանգվածային լրատվամիջոցները:

Հեռուստատեսությունը՝ որպես զանգվածային լրատվամիջոց, համարվում է լեզվական մշակույթի տարածման և ամրապնդման հզոր գործիք: Հեռուստատեսային լեզվի մաքրությունը կարևոր նշանակություն ունի ոչ միայն տեղեկատվության որակի բարձրացման, այլև ազգային լեզվամշակույթի պահպանման ու հարստացման համար: Այն ոչ միայն արտացոլում է հասարակության լեզվական վիճակը, այլև ձևավորում նոր լեզվական միտումներ:

Հայաստանի հեռուստաալիքները, այդ թվում և «5-րդ ալիքը», լայնորեն տարածում են տեղեկատվություն տարբեր հաղորդումների միջոցով: «5-րդ ալիք» հեռուստաընկերությունը հեռարձակում է բազմազան ծրագրեր, որոնք ընդգրկում են ինչպես սեփական արտադրության հաղորդումներ, այնպես էլ արտասահմանյան ֆիլմեր և ժամանցային հաղորդումներ: Նրանց ծրագրային ցանցում ընդգրկված են նաև օպերատիվ և հավաստի լուրեր, հարցազրույցներ, ռեպորտաժներ ամենաթեժ կետերից, ինչպես նաև ուղիղ միացումներ Հայաստանի տարբեր շրջաններից: Թեմայի ուսումնասիրության շրջանակում մեզ հետաքրքրել է **«5-րդ ալիքի»** հեռուստատեսային հաղորդումներից **«Հայլուր», «Օրագիր»** և **«Հարցազրույց»** հաղորդաշարերի լեզվական որակը: Ուրախությամբ պետք է նշեմ, որ **«Հայլուրի»** հաղորդավարների (Լարա Առաքելյան, Թերեզա Կադանչյան, Ծովինար Բարխուդարյան, Ալբերտ Մերոբյան, Լիլիթ Սարգսյան) խոսքը հստակ է, գրագետ, համապատասխանում է լրագրողական էթիկային և լեզվական նորմերին՝ ապահովելով տեղեկատվության ճիշտ ու հստակ փոխանցումը լսարանին և կատարելով կարևոր դեր լեզվական մշակույթի տարածման ու ամրապնդման գործում: Ռեպորտաժներում լրագրողների խոսքը, եզակի բացառություններով հանդերձ, նույնպես գրական հայերենի նորմի սահմաններում է: Սակայն քաղաքացիների խոսքը, հատկապես մարզերում նկարահանված ռեպորտաժներում, հնչում է խոսակցական լեզվով, երբեմն՝ բարբառով՝ հազեցած ժարգոնային բառերով: Քաղաքացիները խոսում են այնպես, ինչպես առօրյայում՝ առանց գրական լեզվի նորմերը հատուկ պահանջելու: Կարծում ենք՝ սա բնական է և թույլատրելի:

«Օրագիր» և «Հարցազրույց» հաղորդաշարերը քաղաքական-վերլուծական ծրագրեր են, որոնք վարում են լրագրողներ Մարիաննա Ղահրամանյանը և Դերենիկ Մալխասյանը: Նրանց խոսքը ևս հիմնականում հստակ է ու մաքուր: Հաղորդումների հյուրերը (Հրանտ Բագրատյան, Վիգեն Հակոբյան, Իշխան Սաղաթելյան, Տիգրան Քոչարյան, Լարիսա Ալավերդյան, Գեղամ Մանուկյան, Բորիս Մուրադի և այլք) հայտնի քաղաքագետներ ու փորձագետներ են: Նրանց խոսքը բնորոշվում է գրեթե նույնատիպ շեղումների բազմակի դրսևորումներով:

Այդ շեղումները փորձել ենք ներկայացնել մի քանի հիմնական խմբերով:

1. Արտասանական շեղումներ

Քննության ընթացքում արձանագրված արտասանական սխալները քիչ են: Դրանցից են՝ **երգրորդ** (երկրորդ), **անվորակ** (անորակ), **ծեխնիկական** (տեխնիկական), **որպիսի** (որպեսզի), **Եվրամիություն** (Եվրամիություն), **նախագահ** (նախագահը), **զընհատվում է** (գնահատվում է), **հիցուն-վացուն** (հիսուն-վաթսուն), **յոթը տարվա արդյունք** (յոթ տարվա արդյունք) և այլն:

2. Բառագործածության սխալներ

Քննվող նյութում բառագործածության սխալները ևս քիչ են: Հանդիպել ենք միայն **բառ** հասկացության փոխարեն **խոսք** բառի գործածությանը (Կներեք այս խոսքը գործածելու համար) և **հասկացություն** բառի փոխարեն **հասկացողություն** բառի գործածությանը (Հասարակական տրանսպորտ հասկացողությունը դարձել է անհասկանալի էքզիստենցիալ վտանգ):

3. Խոսակցական լեզվի տարրեր, բարբառային բառեր ու արտահայտություններ, ժարգոնային բառեր

Հայերենը, ունենալով բարբառների բազմազանություն, հաճախ է բախվում դրանց ազդեցությամբ առաջացած արտասանական և կառուցվածքային շեղումների: Ուսումնասիրված հաղորդումների հյուրերի լեզվում գործածված այդ կարգի բառերից և բառաձևերից են՝ **թագա երկաթգիծ**, **ախմախ-ղամբախ**, **ջհանդամը**, **կրուտիտ լինել**, **փայ մտնել**, **շուխուր անել**, **քցել ուրիշի գրպանը**, **պլինտուսի մակարդակ**, **ամսեկան վճար**, **էկած**, **զցել քացու տակ**, **քոքը կտրել**, **էկեք թքեք**:

4. Օտարաբանությունների չարդարացված օգտագործում

Հաղորդումներում մեծ թիվ է կազմում օտարաբանությունների գործածությունը: Օտար բառերը, որոնք ունեն իրենց հայերեն համարժեքները, խոչընդոտում են հայերենի բնական հնչողությունը, լեզվական ներդաշնակությունը: Հանդիպել ենք այսպիսի օտարաբանությունների՝ **դոմինանտ** (առաջատար), **ագրեսիա** (բռնություն, ոտնձգություն), **մանիպուլացնել** (շահարկել), **լեզվափոխություն** (իրավաչափություն), **էպոպեա** (հերոսապատում), **ինդիկատորային դրվագ** (հատկանշական դրվագ), **կոնֆլիկտ** (հակամարտություն), **նավիգատոր** (ուղղորդում, կողմնորոշում), **ֆիքսել** (արձանագրել), **պարամետր** (ցուցանիշ), **ֆորմատ** (ձևաչափ), **ինտրիգ (դավադրություն)**, **օպտիմալացում (կատարելագործում)**, **դոտացիա** (նպաստ կամ պետական աջակցություն), **իմիտացիա** (նմանակում), **ռեֆերենտում** (հանրաքվե), **տրենդ** (նորաձևություն), **տենդենց** (միտում), **սիմպտոմ** (ախտանշան), **պրագմոզ** (կանխատեսում), **պարազիտիզմ** (մակաբուծություն), **կոզր** (հաղթաթուղթ), **պրոբլեմատիկ** (խնդրահարույց), **նախընտրական կամպանիա** (նախընտրական արշավ), **կոնֆիգուրացիա** (կառուցվածք), **կատեգորիա** (խումբ), **լոյալ դիրք** (համարժեք կամ հանդուրժող դիրք), **պլացդարմ** (հենակետ կամ մեկնարկային դիրք), **շանս** (հնարավորություն), **Մեդրիի կորիդոր** (Մեդրիի միջանցք), **ինտերվալ** (հեռավորություն), **Եվրոկամիսիա** (Եվրոպական հանձնաժողով), **պրոբլեմ** (խնդիր), **պազիցիա** (դիրքորոշում), **կատալիզատորներ** (խթանիչներ), **կատաստրոֆիկ վիճակ** (աղետալի վիճակ), **կոմպրոմիս** (փոխզիջում), **անոնս** (հայտարարություն), **սուբսիդավորել** (ֆինանսավորել), **դեգրադացիա** (նվազման գործընթաց, անկում):

5. Ձևաբանական սխալներ

Քաղաքական վերլուծաբանների խոսքում առավել հաճախ հանդիպում են բառաձևերի շեղումներ՝ հիմնականում կապված անցյալի հիմքից կազմվող որոշ բայաձևերի և որոշ գոյականների թեք հոլովաձևերի հետ: Դրանք առավելապես խոսակցական լեզվի ազդեցության կամ բարբառների ներգործության հետևանք են: Օրինակ՝ **ասեցիք** (ասացիք), **խոսաց** (խոսեց), **խոսացել ա** (խոսել է), **խոսացեք** (խոսեք), **վերցրեցի** (վերցրի), **չափազանցացնում եք** (չափազանցում եք), **կարայի գնալ** (կարող էի գնալ), **դառել է** (դարձել է), **գովալու է** (գովելու է), **մի քանի հարց ճշտի՛** (մի քանի հարց ճշտի՛ր), **աշխատացնել** (աշխատեցնել), **կանգնացնել** (կանգնեցնել), **սովորացնել** (սովորեցնել), **ձմեռ պապու նման** (ձմեռ պապի նման), **միտման արդյունք** (միտումի արդյունք), **ինչոր ձևի տեր կանգնենք** (ինչ-որ ձևով տեր կանգնենք), **այլոք** (այլք):

Ժամանակաձևերի եզակի երրորդ դեմքի **է** օժանդակ բայը և բաղադրյալ ստորոգյալի **է** հանգույցը փոխարինված են **ա**-ով կամ **չ/հ**-ով (Ժխտական խոնարհման դեպքում) օրինակ՝ **իրան քցել ա** (իրեն գցել է), **հլա մի քիչ իջել ա** (դեռ մի քիչ իջել է), **ընկել ա** (ընկել է), **դուրս ա էկել** (դուրս է եկել), **էղել ա** (եղել է), **ոնց ա վեկալում** (ինչպես է վերցնում), **խոսել ա** (խոսել է), **դրել ա** (դրել ա), **ինձ թվում ա** (թվում է), **հաշվարկներ ա անում** (հաշվարկներ է անում), **թալան ա** (թալան է), **ինչ պետք ա անենք** (ինչ պետք է անենք), **կարող ա դուր գա** (կարող է դուր գալ), **հնարավոր չի հանել** (հնարավոր չէ հանել), **ով ա մեղավոր** (ով է մեղավոր), **Արցախը հայկական ա** (Արցախը հայկական է), **պետք ա զարգացնել** (պետք է զարգացնել), **բավարար չի** (բավարար չէ), **մարդ ա** (մարդ է), **քաղաքացի ա** (քաղաքացի է) և այլն: Խոսքում տարածված է նաև **մենք, դուք, ինքք, իրենք** անձնական դերանունների թեք հոլովաձևերի և **ցուցական դերանունների**՝ գրական հայերենի նորմից շեղվող տարբերակների գործածությունը, ինչպես՝ **մեզի դատում են** (մեզ դատում են), **ձեզի ի՞նչ ա պետք** (ձեզ ի՞նչ է պետք), **իրա համար խնդրի չի** (իր համար խնդիր չէ), **իրան հայտնել էր** (իրեն հայտնել էր), **իրանք պարտավոր են** (իրենք պարտավոր են), **էդտեղ ա երևում** (այդտեղ է երևում), **էնքան ա անցել սահմանները** (այնքան է անցել սահմանները), **ստեղ կարևոր ա** (այստեղ կարևոր է), **սենց պիտի անենք** (այսպես պիտի անենք), **ձևը տենց չի** (ձևն այդպես չէ) **էն, որ կա** (այն, որ կա), **էս, էսի** (այս), **էդ, էդի** (այդ), **էն, էնի** (այն), **էսպես** (այսպես), **էդպես** (այդպես), **էնպես** (այնպես): Տարածված սխալներից է նաև **ինչու՞** հարցական դերանվան փոխարեն **ի՞նչ** դերանվան սեռական-տրական հոլովի գործածությունը առանց համար կապի՝ **ինչի՞ հասանք էս օրին** (ինչո՞ւ հասանք այս օրին), **ինչի՞ էր ձախողված** (ինչու՞ էր ձախողված), **ինչի՞ թվերը չեն աճում** (ինչու՞ թվերը չեն աճում): Միայն է նաև **որևէ** դերանվան փոխարեն **որևիցե** դերանվան գործածությունը, օրինակ՝ Որևիցե մի հատ զինվոր չի մտնի Արծվաշեն (Որևէ զինվոր չի մտնի Արծվաշեն):

6. Շարահյուսական սխալներ

Հանդիպած շարահյուսական շեղումները վերաբերում են համաձայնությանը, խնդրառությանը, հոլովառությանը և նախադասությունների կապակցման միջոցներին: Մրանց առաջացման պատճառները բազմազան են՝ բարբառային առանձնահատ-

կություններ, խոսքի հապճեպ ձևակերպումներ կամ քերականական կանոնների բավարար չիմացություն, օտար լեզուների ազդեցություն: Առանձնացրել ենք հետևյալ սխալները՝

ա. Համաձայնության սխալներ

Լուրջ խնդիրներ կլինի (կլինեն):

Առաջանում է տարբեր հարցեր իմ մոտ (Առաջանում են տարբեր հարցեր ինձ մոտ):

Իր որոշումները չի կատարվում (չեն կատարվում):

Բացառում ենք այն զիջումները, որ կարա կենսական լինի: Բացառում ենք այն զիջումները, որ կարող են կենսական լինել:

բ. Խնդրառության և հոլովառության սխալներ

Պետք է պատրաստ լինես՝ պաշտպանել (պաշտպանելու) երկրիդ սահմանները:

Փորձ կա շեղել (շեղելու):

Հարկադրված եղան տեսնել (տեսնելու):

Չեմ ուզում անդրադառնամ (անդրադառնալ):

Չի կարողանում վերցնի (վերցնել):

Ուզում եմ ասեմ (ասել)՝ թերություններ չպիտի լիներ (լինեին):

Չեն արձագանքել իմ հայտարարությունների վրա (հայտարարություններին): Մենք չենք ուզում առերեսվել ճշմարտության հետ (ճշմարտությանը): Չես կարողանում պայքարել մեր հետ (մեզ հետ):

Պետք է համաձայնել որոշման հետ (որոշմանը):

գ. Կապակցման միջոցներ

Սահմանափակել այն բոլոր ուժերի գործունեությունը, ովքեր կասեին, որ Արցախը հայկական է: (Սահմանափակել գործունեությունը բոլոր այն ուժերի, որոնք կասեին, թե Արցախը հայկական է):

Այն վարորդները, ովքեր (որոնք) չեն ընդվզի, կաշխատեն:

Եկել են այն ուժերը, ովքեր (որոնք) ապագգային են:

Բանը կայանում է նրանում, որ նրանք չեն տիրապետում իրավիճակին: Բանն այն է, որ նրանք չեն տիրապետում իրավիճակին:

7. Մակաբույծ և ավելորդ բառեր

Հարցազրույցների ժամանակ թե՛ լրագրողների, թե՛ հրավիրված քաղաքագետների լեզվում որպես մակաբույծ միավորներ հաճախակի գործածվում են ինչ-որ բան անընդհատ հաստատող, բայց հարցական հնչերանգով արտաբերվող **հա՞** բառը, **այս-պէս ասենք, էսպէս ասենք** կապակցությունները, ենթակայից հետո դրվող **դա** ցուցական դերանունը: Օրինակ՝ Այդ կարծիքը, **հա՞**, իրենը չի (չէ): Կախարդական փայտիկը **դա** հարկային բեռն ավելացնելն է:

Տարածված է նաև **հանդիսանում է** բառաձևի ավելորդ գործածությունը, օրինակ՝ Օրակարգի պատասխանատուն **հանդիսանում են** լիբերալ գլոբալիստները: Ադրբեջանը **հանդիսանում է** պլացդարմ:

Այսպիսով՝ ընդհանրացնելով մեր խոսքը **«5-րդ ալիք»** հեռուստաընկերության քաղաքական-վերլուծական հաղորդումներից **«Հայլուր», «Օրագիր»** և **«Հարցազրույց»** հաղորդաշարերի լեզվական որակի մասին՝ կարող ենք նշել, որ ի տարբերություն համապատասխան լեզվական կրթություն և պատրաստվածություն ունեցող հաղորդավարների հստակ, գրագետ, կառուցվածքային առումով ճիշտ ու հասկանալի լեզվի՝ հաղորդումներին հրավիրված քաղաքագետների և փորձագետների խոսքը երբեմն շեղվում է գրական հայերենի լեզվական նորմից, պարունակում բազմապիսի և բազմաբնույթ սխալներ, որոնք խախտում են լեզվի միասնականությունը և անթույլատրելի են հատկապես քաղաքական-վերլուծական հաղորդումներում:

Ղամոյան Լուսինե

ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան

լեզվի ինստիտուտի ավագ գիտաշխատող, Բ.Գ.Թ.

lgamoyan@mail.ru

ԱՆԱՂԱՐՏ ՊԱՀԵՆՔ ՄԵՐ ՄԱՅՐԵՆԻՆ

Անժխտելի փաստ է, որ լեզուն է տվյալ ժողովրդի գոյության, հարատևության և ինքնահաստատման հիմքերի հիմքը: Լեզվի զարգացումը, նրա հասարակական գործառնությունը մեծապես պայմանավորվում է հասարակական այն պայմաններով, որոնցում ապրում է նրանով խոսող հասարակությունը:

Հայոց լեզուն աշխարհի հնագույն և հարուստ լեզուներից է, որը, հազարամյակների ընթացքում ենթարկվելով բազմաթիվ ազդեցությունների, պահպանել է իր ինքնատիպությունը՝ հարստանալով ինչպես ներքին զարգացումների, այնպես էլ տարբեր լեզուներից փոխառված բառերի շնորհիվ: Այն մեր ժողովրդի ինքնության հիմնաքարն է:

Ներկա փուլում յուրաքանչյուր հասարակական նոր հարաբերություն նոր ծիլեր է զգում մեր լեզվում, որի հետևանքով հատկապես խոսակցական լեզվում նկատվում են մեծ շեղումներ: Դրանք թեպետ առաջին հայացքից անկանոն են թվում, սակայն իրականում արդյունք են այն արտալեզվական առանձնահատկությունների, որոնք առկա են տվյալ հաղորդակցական իրադրության մեջ:

Հասարակական-քաղաքական նոր պայմաններում փոփոխությունների է ենթարկվում նաև ԶԼՄ-ների լեզուն, որի դերը լեզվամշակույթում առանձնահատուկ կարևորություն ունի: Հեռուստատեսության որոշ հաղորդումներում հնչում է մաքուր գրական հայերենը, սակայն հեռուստասերիալներում կամ որոշ երգիծական հաղորդումներում լեզվի աղավաղումը նկատելի է, և այն կարող է բացասական ազդեցություն ունենալ լայն լսարանի վրա: Ուստի կարևոր է համապատասխան վերահսկողության մեխանիզմների մշակումն ու կիրարկումը:

Ինչ վերաբերում է լրատվամիջոցներին, ապա պետք է նկատել, որ շատ լրագրողներ ուշադիր են իրենց խոսքի նկատմամբ, սիրով ու երկյուղածությամբ են վերաբերվում մայրենի լեզվին և չեն գործածում անհարկի, ոչ հայերեն բառեր: Թեև

լինում են դեպքեր էլ, երբ գրագետ ու գեղեցիկ լեզվով շարադրված նյութերի կողքին ի հայտ են գալիս ոչ ճշգրիտ, աղավաղված բազմաթիվ ձևակերպումներ:

Աշխատանքում առանձնացրել ենք էլեկտրոնային տիրույթում առկա թերթերից մեկի՝ news.am-ի լեզվին բնորոշ բառային ու քերականական կանոններից մի շարք շեղումներ, սխալ կազմություններ, ոճական անհանձնարարելի կիրառություններ և այլն, որոնք կներկայացվեն ստորև: Այսպես, վերոնշյալ լրատվամիջոցի նյութերն ընթերցելիս հանդիպում ենք.

- **անհարթ, անհաջող նախադասություններ**

Թրամփին իր երկրորդ ժամկետի սկզբում գրգռել է կանադացիներին: (20:35, 16.02.2025)

Այնուհետև երաժշտական կատարումներով հանդես եկավ «Նոստալգիա» անսամբլը, որին հաջորդեց ընդունելություն: (21:46, 05.02.2025)

... նշված ժամանակահատվածում թոքաբորբով դիմել է՝ 1022 պացիենտ, ինչը նախորդ շաբաթվա համեմատ հիվանդացությունը գտնվում է գրեթե միևնույն մակարդակի վրա: (09:59, 14.02.2025)

Գործակալության տվյալներով՝ տեխնիկական խնդիրներ առաջացել են բազայից թոփքից մոտավորապես մեկուկես ժամ անց և վերաբերում են օդաչուի խցիկում գտնվող ապակին:

Մյունխենի անվտանգության համաժողովում ԱՄՆ պետքարտուղարը նախատեսվում է «միջազգային գործընկերների հետ քննարկել ԱՄՆ-ի մի շարք առաջնահերթություններ» և մասնակցել G7 երկրների դիվանագիտական առաքելությունների ղեկավարների հանդիպմանը:

Դավիթ Բշխանյանը նրա հետ խոսելուց հետո, երբ վերադառնում էինք Ստեփանակերտ, արդեն լսվել էին առաջին կրակոցները, այդ կրակոցներից 20 բուպե առաջ էր Ալեն Սիմոնյանը զանգել Դավիթ Բշխանյանին: (17:06, 12.02.2025)

Ամեն անգամ, երբ մենք մտածում ենք՝ անբարոյականությունը ինչ-որ չափ պիտի ունենա, կրկին այս մարդիկ գալիս են ապացուցելու, որ չէ, այդ չափը միշտ ավելի կարող իջնի, սրիկայությունը էլ ավելի կարող իջնի: (15:22, 12.02.2025)

Դեսպանը հատուկ շնորհակալություն հայտնեց Գլխավոր շտաբին և ԱԳՆ-ին Հայաստանի հյուսիսային և հյուսիս-արևելյան շրջաններում հեղեղումների պատճառած վնասներին հասցեագրման Հայաստանի խնդրանքին ընդառաջելու և երեք կամուրջներ Հայաստանին տրամադրելու համար: (21:46, 05.02.2025)

- **ավելորդաբանություններ**

Բացի դրանից, կոդները Միութենական պետության մասնակցի վրա զինված հարձակումը դիտարկում են որպես ագրեսիայի ակտ ամբողջ Միութենական պետության դեմ և կձեռնարկեն համապատասխան պատասխան միջոցներ՝ օգտագործելով իրենց տրամադրության տակ եղած բոլոր ուժերն ու միջոցները: (20:48, 05.02.2025)

Օրբանը հավանաբար կպարտվի ընտրություններում գնաճի աճի և Հունգարիայում ծնելիության նվազագույն մակարդակի պատճառով: (20:27, 05.02.2025)

Օրբանը 5,35 միլիարդ դոլար է ծախսել 2022 թվականի վերջնական ընտրություններից առաջ՝ կանխելու համար նախորդ ընդդիմադիր մրցակցի վտանգը. քվեարկություն, որը նրան հերթական ջախջախիչ հաղթանակ բերեց՝ գնաճի ուռճացման գնով: (20:27, 05.02.2025)

ՀՀ դեսպան Տիգրան Մկրտչյանը շնորհավորեց ՀՀ զինված ուժերի 33-րդ տարելիցը՝ նշելով, որ Հայոց բանակը հանդիսանում է ՀՀ ինքնիշխանության և անկախության կարևորագույն գործոններից մեկը և որքան ինքնաբավ և ուժեղ է բանակն, այդքան ուժեղ և ինքնաբավ է պետությունը: (21:46, 05.02.2025)

... համատեքստում անդրադառնալով նաև 2020թ-ի ադրբեջանական ագրեսիայի արդյունքում զոհված մայոր Մկրտիչ Հակոբյանին, ով հանդիսանում էր Հունաստանի «Էվելպիդոն» ռազմական ակադեմիայի շրջանավարտ: (21:46, 05.02.2025)

- **բառագործածական սխալներ**

Բարու այցելելու հրավեր է փոխանցվել..... Հնչեցին պահին պատշաճող բոլոր բաները: (22:02, 07.02.2025)

Մի քանի հոգի խոստովանել են, որ նրա դեմքը տարօրինակ «ձգված» տեսք ուներ, ինչը պատճառ է դարձել, որ խոսակցություններ առաջանան, որ նա մի շարք կոսմետիկ շտկումների է ենթարկվել գովազդի նկարահանումից առաջ: (12:54, 10.02.2025)

Ինքը՝ Ուեսթը, արգելված է եղել գրեթե ութ ամսով՝ 2022թ. դեկտեմբերից մինչև 2023թ. ամառ, երբ սվաստիկա էր հրապարակել... (14:14, 10.02.2025)

Կիրակի օրը ԱՄՆ տարածքի մեծ մասում կրկին ձմեռային խիստ եղանակ է հաստատվել (19:33, 16.02.2025)

Հյուսիսային հարթավայրերում կյանքին սպառնացող սառնամանիք է հաստատվել... (00:47, 10.02.2025)

Երևան քաղաքում մի քանի օրով, այս ձմեռվա ընթացքում առաջին անգամ ձնածածկույթ հաստատվեց (19:34, 16.02.2025)

- **կրկնակի ենթակա**

Եվ յուրաքանչյուր ոք, ով հետևում է դրան իսպանախոս աշխարհում եւ այլուր, մենք պետք է պատրաստ լինենք ոտքի կանգնել, ասել ճշմարտությունը, լինել ազնիվ եւ հասկանալ, որ մեր կյանքում տեղ կա բազային բարության, սիրո եւ փոխըմբռնման համար»։ (15:55, 10.02.2025)

Սասունիկ գյուղի բնակիչ Մհեր Մխոյանը SHAMSHYAN.com-ի թղթակցի հետ զրույցում ասել է. «Վարձով վերցրած այդ տարածքում ունեի 2 մայր խոզ և 23 հատ մորթի ենթակա, միջինը **60 կմ միս** տվող խոզեր, որոնք բոլորը մի քանի օրվա ընթացքում հիվանդացան ու սատկեցին։ (21:39, 16.02.2025)

- **համաձայնության և խնդրառության սխալներ**

Նրա գնահատմամբ՝ «Կանադայի հետ կապված իրավիճակը շատ հետաքրքիր կլինի»։ «Որովհետև, գիտեք, մեզ պարզապես պետք չեն նրանց արտադրանքը։ (11:11, 14.02.2025)

ՀՀ դեսպանը նաև հիշատակեց 1994թ-ին զոհված Արմեն Սադոյանի ընտանիքի կորստին՝ գնահատելով հարազատների ներկայությունը միջոցառմանը (21:46, 05.02.2025)

Խամենեին հիշեցրել է բանակցությունները, որոնք հանգեցրել են իրանական միջուկային ծրագրի շուրջ Գործողությունների համատեղ համապարփակ ծրագրի կնքման մասին, շեշտելով, սակայն, որ Միացյալ Նահանգները չի կատարել իր պարտավորությունները, և պատժամիջոցները մնացել են ուժի մեջ։ (21:41, 07.02.2025)

2024թ. սեպտեմբերին որոշում էր կայացվել տրամադրել լրացուցիչ 130 մլն, ինչի արդյունքում ՀՀ տրամադրվող դրամաշնորհի ընդհանուր գումարը կազմում է 250 մլն դոլար: (22:02, 07.02.2025)

Նաթանյահուն «դժոխքի դարպասներով» է սպառնացել ՀԱՄԱՍ-ին, եթե բոլոր իսրայելցի պատանդներն ազատ չարձակեն... (18:59, 16.02.2025)

- **բայի ժամանակային ձևերի անհամապատասխանություն միևնույն տեքստի մեջ**

....անցկացվել է ՀՀ զինված ուժերի կազմավորման 33-րդ տարեդարձին նվիրված հանդիսավոր միջոցառումը, որին մասնակցել են Ընդունելության մասնակիցների առջև ողջույնի խոսքով հանդես եկան Հունաստանում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Տիգրան Մկրտչյանը և.... (21:46, 05.02.2025)

Քանյե Ուեսթը նորից պաշտպանել է Շոն «Դիդդի» Քոմբսին և ասաց, որ «տղամարդիկ իսկական զոհերն են», նախքան իր X հաշիվը դեակտիվացնելը: (10:37, 11.02.2025)

- **որոշյալ հոդի սխալ գործածություն**

... ասաց նա, հավելելով, որ լաբորատորիայի բոլոր աշխատակիցներն մտել են ՀՎԿԱԿ-ի Արմավիրի մասնաճյուղի տնօրենի մոտ, և հրաժարվել են այսօրվանից կատարել իրենց պարտականությունները: (20:44, 10.02.2025)

- **ուղղագրական սխալ**

Բարայելն ու Ամերիկյան ուս-ուսի կանգնած են իրանական սպառնալիքին դիմակայելու հարցում: (17:57, 16.02.2025)

- **հոգնակիի կազմության սխալ գործածություն**

ՀՀ դեսպանն անդրադարձավ Հայաստանի և Հունաստանի Պաշտպանության նախարարությունների և Գլխավոր շտաբերի միջև ձևավորված ամուր հարաբերություններին և վերջին տարիներին էլ ավելի մեծ մասշտաբներ ներառող համագործակցությանը... (21:46, 05.02.2025)

- **սխալ շարադասություն**

Բնականաբար ես հասկանում եմ, որ մարդկանց մոտ կարող է դժգոհություն նաև առաջանալ կրճատման հետ կապված և այլն... (20:44, 10.02.2025)

- **կրկնվող շաղկապներ**

Դիտորդների ուշադրությունից չի վրիպել, որ նախագահ Փեգեշքիանն ընդգծել է, որ կովկասյան տարածաշրջանի երկրների տարածքային ամբողջականության պահպանումը իր երկրի արտաքին քաղաքականության հիմնարար սկզբունքն է...
(22:02, 07.02.2025)

...թիկնու տերևով դրոշի պահանջարկի աճը կանադական հայրենասիրության պոռթկման արդյունք է, որն առաջացել է ԱՄՆ-ի հետ լարված հարաբերությունների պատճառով, որը հրահրել է ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը: (20:35, 16.02.2025)

• **բազմաթիվ օտար տերմիններ**, ինչպես՝ *սվաստիկա* հրապարակել, *մոդերացիայի* կանոններ, *դեզինֆորմացիա*, *կեղծ նարատիվներ*, *ճանապարհային դեպարտամենտ*, *ադեկվատ*, *դիվիդենդ*, *դիլետանտ*, *պրակտիկ*, *պլացդարմ*, *ինֆորմացիա*, վարակային *պանդեմիա* և այլն:

Բազմաթիվ տերմինների համար այսօր կան հայերեն հաջողված համարժեքներ, որոնց գործածությունը կնպաստի լեզվի հասկանալիությանն ու մատչելիությանը:

Պետք է անել ամեն ինչ՝ մեր լեզվի գեղեցկությունը, ճոխությունն ու ձկունությունը պահպանելու համար: Ժամանակակից կրթական համակարգը պետք է լինի լեզվի պահպանման կարևոր գործոններից մեկը: Սակայն ներկայումս օտար լեզուների, մասնավորապես անգլերենի դերը մեծացել է այնքան, որ հաճախ մայրենիի նկատմամբ ուշադրությունը նվազում է: Կարծես այսօրվա կրթահամակարգի խնդիրը միանգամայն այլ է՝ «համաշխարհային շուկայի պահանջներին համապատասխան քաղաքացիներ կրթելն է»: Այստեղ հիշենք Հովհաննես Շիրազի այն խոսքերը, երբ հայի բերանից պոկելով հայոց լեզուն.

Օտարն հայոց մահն է ուզում...

Թեև օտար լեզուների իմացությունը անհրաժեշտություն է, սակայն այն չպետք է հանգեցնի հայերենի անտեսման:

Հայի սուրբ պարտականությունն է ուսում ստանալ հայերեն, կրթվել, մտածել, խոսել և արարել հայերեն, քանի որ ազգային նկարագրի ունեցող մարդն ինքնին արժեք է:

Մեր լեզուն մեր հարստությունն է, և միայն մեր համատեղ ջանքերի շնորհիվ այն կշարունակի լինել կենսունակ ու արդիական՝ ապահովելով մեր ազգային ինքնության

հարատևությունը: Այս նպատակով անհրաժեշտ է կազմակերպել լեզվապահպանական նախաձեռնություններ՝ հատուկ ուշադրություն դարձնելով երիտասարդ սերնդի կրթությանը:

Մայրենի լեզվով ճիշտ խոսել ու գրել սովորելը (նաև սովորեցնելը) և՛ ազգային պարտականություն է, և՛ կյանքի հրամայական:

Բայց նա է հայ, ով հովազի

Արնախում երախումն էլ

Իր մայրենի լեզվով խոսի,

Մոր կաթի հետ ծծած լեզվով,

Որ հայ գետը ծով ծնի, ծով, -

Ժխորում էլ Բաբելոնի

Խոսի լեզվով իր մայրենի

Հայոց լեզվով, որ միշտ ջահել,

Մեզ բյուր դարեր հայ է պահել:

Մարգարյան Լուսինե
ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան
լեզվի ինստիտուտի ավագ լաբորանտ, ք.գ.թ., դոցենտ
margaryan.lusine@yandex.com

ՀԱՂՈՐԴՈՒՄ ՄԱՅՐԵՆԻԻ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ

Լեզուն հայրենիքն է: Հայրենիքն ու լեզուն ապրում են, եթե տեր ունեն: Տիրազուրկ ու հայրենազրկված արևմտահայերենը պատմության խաբան է, ու նրա դասն էր մեզ՝ կապրի հայերենը, քանի հայը տերն է իր երկրի, կղադարի գոյություն ունենալուց, երբ հայրենազրկվի: Դասը մնաց պարզ սերտողություն, չդարձավ ճանաչողություն, ու այսօր մայրենիի զարկերակը սնող ևս մեկ պաշտպանիչ կարևոր երակ կտրված ու խլված է անգղջում:

Թող այնպես լինի, որ մայրենիի տունը միշտ լինի և լինի մաս չկորցնող ամբողջի արժանապատվության ու պատվի լիցքով, ու երբեք ոչ մեկի հոգին չմղկտա մայրենիի իր բաժնորդը իր սերնդին թողնել չկարողանալու անգործությունից:

Գրական արևելահայերենի նորմի կիրառումը **ABC** մեղիա տեղեկատվական-վերլուծական հարթակում

Երկշաբաթյա կտրվածքով դիտարկել ենք <<Լուրեր>>, <<Ռեպորտաժ>> և Աբրահամ Գասպարյանի հեղինակային <<Փոխիր ավիքը>> հաղորդումները:

Թե՛ Լուրերի, թե՛ Ռեպորտաժի լրագրողների խոսքը գրական արևելահայերենի նորմի լիարժեք իրացման դրսևորում է: Երկշաբաթյա դիտարկումով եթեր սպրդած սխալ կիրառություններն աննշան են, և դրանք դիպվածային բնույթ են կրում:

Ինչպես՝ համաձայնության սխալի մեկ դեպք միայն. *Ականջի հետև գցելը և լուռ սպասելը հղի է լուրջ վտանգներով:*

Խնդրառական սխալի մեկ դեպք՝ *նպատակ ունի ամրապնդել*

Եվ քերականական սխալ կառույցի մասնավոր կիրառում՝ *խոսքը վերաբերվում է նրանց:*

Ինչո՞ւ ենք որակում դիպվածային, որովհետև նույն հաղորդավարները իրենց խոսքում նույն այդ կառույցները գերազանցապես ճիշտ են կիրառում: Եվ մեր նկատած սխալները բնավ լեզվական իրողության չիմացություն չեն, այլ խոսակցականի ազդեցության ինքնաբեր դրսևորումներ, որոնք խոսքի հաջորդ շղթայում արդեն հաղթահարվում են:

Ռեպորտաժների ժամանակ քաղաքացիների կամ ոլորտի այս կամ այն պատասխանատուների խոսքը բացառապես խոսակցական նորմի շրջանակում է՝ արտասանական իրողություններից մինչև քերականական կառույցների կիրառություն: Եվ գրական նորմի կիրառության համատեքստում քաղաքացիների խոսքը դիտարկելը և այն մայրենիի աղավաղում որակելը, կարծում ենք, ճիշտ չեն, քանի որ քաղաքացիների խոսքը խոսակցական նորմով է դրսևորվում: Այս դեպքում ոչ թե մայրենիի աղավաղում ունենք, այլ հասարակական անփույթ վարք, իսկ իրավական տեսանկյունով՝ օրինախախտում՝ ՀՀ Լեզվի մասին օրենքի 3-րդ հոդվածի 1-ին և 3-րդ պարբերությունների: Եթե քաղաքացին կամ ոլորտի պատասխանատուն ջանք չի գործադրում իր խոսքը հարդարելու և ըստ հարկի գրական հայերենով պատշաճ ներկայանալու, երբ գիտի, որ հանրայնացվելու է խոսքը, ապա այս դեպքում մտածողության և վերաբերմունքի խնդիրն է առկա: Հանրային խոսքով ներկայանալու պատասխանատվությունից անհարմար զգալուն փոխարինել է խոսքի նկատմամբ վերաբերմունքի անպատկառությունը: Ի դեպ սա միայն լեզվով չի դրսևորվում: Բոլորս գիտենք, որ լեզուն նաև վարք է, վարքագծի դրսևորման միջոց: Մայր քաղաքի փողոցների մաքրությունը ուղիղ համեմատական է նույն քաղաքացիների՝ հանրային խոսքի լեզվական մաքրությանը: Արտաքուստ գուցե իրար հետ չաղերսվող, բայց նույն վարքի դրսևորումն է տարբեր հարթություններում. մարդ չի կարող օրինախախտ լինել մի տարածքում, օրինապահ վարք դրսևորել մյուսում: Օրինապահությունը կենսաձև է:

Ինչ վերաբերում է Աբրահամ Գասպարյանի «Փոխի՛ր ալիքը» հեղինակային հաղորդմանը, ապա այն գրական արևելահայերենի նորմի օրինակելի իրացում է. հատկանշելի են բառագործածության ու բառընտրության ճշգրտությունն ու նպատակայնությունը, օտարաբանությունների համակշռված և տեղին կիրառությունը, մասնագիտական եզրույթների չափավոր օգտագործումը՝ հընթացս նաև մայրենիով մեկնաբանելով, և ամենակարևորը՝ քերականական կառույցների զտությունը: Այդօրինակ

մաքուր խոսքի պատճառը, կարծում ենք, ի լրում նրա մասնագիտական խորագիտության, ամենից առաջ նրա մայրենի բարբառի և գրական արևելահայերենի խիստ տարանջատվածությունն է: Եթե հայերեն բոլոր բարբառակիրների գրական արևելահայերենով խոսքը համեմատենք, ապա ոչ արարատյան բարբառի կրողները արարատյան բարբառակիրների համեմատությամբ մաքուր գրական արևելահայերենով են հաղորդակցվում: Դա բնական է և գուցե օրինաչափ:

Եվ մի կարևոր դիտարկում. Հետաքրքրական է, որ Աբրահամ Գասպարյանի խոսքում ընդգծվում է նաև վերաբերմունք լեզվական նորմերի նկատմամբ: Պարզ է, որ գրական նորմը և խոսակցական նորմը համարժեք համակարգեր են լեզվաբանական առումով, մեկը մյուսի նկատմամբ գերակայություն չունի, բայց Գասպարյանի խոսքում դրանք դառնում են իրար հակադրվող և վերաբերմունք ընդգծող հոդորդակցման միջոցներ:

Այսպես՝ երբ խոսքը վերաբերում է իր իսկ բնութագրությամբ «քաղաքական ավագակախմբի ղեկավարին» կամ «մարդամեկին», ապա բառընտրությունը խոսակցական նորմի շրջանակից է կատարվում արհեստավարժորեն, իսկ առանձին դեպքերում էլ ուղիղ խոսք հղելիս դուռ-ով և համարժեք բառապաշարով է դիմում, մյուս բոլոր դեպքերում, երբ խոսքը չի վերաբերում դրան, գրական նորմը դրսևորվում է իր ողջ զտությամբ: Գասպարյանի խոսքում այդ երկու համակարգերը փոխներգործուն կիրառում ունեն՝ իրար հակադրվող և ոճական մեծ կշռույթով:

Այսպիսով՝ փնտրել էինք

1. Բառագործածության սխալներ

Միայն բառընտրություն, անտեղի գործածություն

2. Քերականական սխալներ

Խնդրատական սխալներ, շարադասական սխալներ, համաձայնության սխալներ

3. Ոճական սխալներ

Անհամապատասխան բառերի կամ արտահայտությունների գործածություն, օտարաբանությունների կիրառում

Համոզվել, որ դրանք գտնելու անհնարիությունը հնարավոր է: ABC-ն մեղիա է՝ հայերենի վարպետաց դասով:

ԼԵԶՎԱԿԱՆ ՍԽԱԼՆԵՐ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԿԱՅՔԷԶԵՐԻՑ

Հարգելի գործընկերներ, Մայրենիի օրը առիթ է վերհիշելու, որ մեր ինքնության պահպանման համար վճարված ու վճարվող անասելի թանկ գինը մեզ պարտավորեցնում է նվիրումով զինվորագրվելու ազգային արժեքների պահպանման սուրբ գործին: Եվս 1000-ավոր հերոսներ, ովքեր հայերեն են երազել, հայերեն են կովել ու հայերեն անմահացել, հրամայում են ամենօրյա հոգածությամբ ու ակնածանքով վերաբերվել այս փոքր ազգի՝ Աստծո հետ խոսելու միակ լեզվին:

Այսօր հասարակության գիտակցության և լեզվամտածողության ձևավորման վրա մեծագույն ներգործություն ունեն Ձանգվածային լրատվական միջոցները, որոնք հասանելի են հանրության բոլոր շերտերին: Կարելի է ասել, որ ԶԼՄ-ներում են ձևավորվում լեզվի զարգացման միտումները: Դա մեծացնում է լրագրողների դերն ու պատասխանատվությունը լեզվի մաքրության պահպանման գործում:

Որքան էլ օտար ազդեցությունները անխուսափելի են, ճնշող, իսկ օտար բառերի կիրառությունը մեծ լսարան ունենալու և նորաձև երևալու գրավչություն ունի, լրագրողները չպետք է մոռանան հայերենը մաքուր պահելու իրենց առաքելության մասին. Նրանք պետք է հնարավորինս խուսափեն օտարաբանությունների անհարկի կիրառությունից. մանավանդ այնպիսի օտար բառերի, որոնց հայերեն համարժեքները մեծ գործածություն ունեն, օրինակ՝ **ինդեքս** (ցուցիչ), **պերսոնաժ** (անհատ, անձնավորություն), **շոկ** (ցնցում), **գլոբալ** (համընդհանուր), **պապկա** (թղթապանակ), **պրոցես** (գործընթաց), **մաքսիմալ** (առավելագույն), **ադմինիստրացիա** (ղեկավարություն), **կոմունիկացիա** (հաղորդակցություն), **պրակտիկա** (փորձ, իրականություն), **էֆեկտ** (արդյունք, արգասիք), **լեզվափոխանակ** (օրինականացնել), **դեպրեսիա** (ընկճախտ), **գեոպոլիտիկ** (աշխարհաքաղաքական), **ռեզիդնալ** (տարածաշրջանային), **էլիտա** (վերնախավ), **ռեսուրսները** (միջոցներ), **կամպանիան** (ռազմարշավ), **ռեալ** (իրական) և այլն:

Օրինակները բերված են 168-ամ կայքէջի վերջին 1 շաբաթվա լրահոսի տեքստերից.

1. Նույնիսկ հակառակ **էֆեկտն** է ունեցել:
2. Միգրացե Ադրբեջանն այդ **«սլավկաններն»** օգտագործի Հայաստանի դեմ ռազմական գործողությունները **լեզիտիմացնելու** համար:
3. Իմ նկարներն այդ ժամանակ ասում էին, որ ես **դեպրեսիայի** մեջ եմ:
4. Ի սկզբանե դեմ եմ եղել Նիկոլին, քանի որ նա ի վիճակի չէր, ու **սլավկտիկան** էլ ցույց տվեց, որ ի վիճակի չէ երկիրը ղեկավարելու:
5. Որոշակի լարում ԱՄՆ նոր **ադմինիստրացիայի** և Եվրոպայի միջև չէր կարող չլինել:
6. ՌԴ-ի հետ փոխվստահության **ինդեքսը մինիմումի** վրա է:
7. ՀՀ-ում տեղի ունեցած քաղաքական **պրոցեսները** Ադրբեջանին հնարավորություն տվեցին ստանալ մաքսիմալ օգուտներ...
8. Պատահական չէ, որ այսօրվա ուժի կենտրոններից յուրաքանչյուրն ունի **գլոբալ կոմունիկացիաների** սեփական **մեզանախագիծը**:
9. «Զանգեզուրի միջանցքը ի սկզբանե չուներ ոչ մի իրական տնտեսական կարևորություն կողմերի համար՝ հանդիսանալով բացառապես **գեոպոլիտիկ** նախագիծ Թուրքիայի և **ասլանտիստների** համար՝ ընդդեմ Իրանի, Ռուսաստանի և Չինաստանի:
10. Կասկած չունեմ, որ ստեղծված իրավիճակում Նիկոլը փորձելու է արագացնել հենց Էրդողանի հովանու ներքո **ռեզիոնալ** նոր գործարքի կնքումը՝ քանի դեռ **գլոբալ** աշխարհակարգի **տեկտոնիկ** տեղաշարժերը չեն հասել Հարավային Կովկաս և Հայաստան:
11. Արցախի քաղաքական **էլիտան** միջոցառումներ է ծրագրել.
12. շատ ավելի բարդ կլինի մրցել Ռուսաստանի հետ **ռեսուրսները** մեկտեղող Չինաստանի հետ
13. Անհետաքրքիր **պերսոնաժ** է՝ քաղաքական առումով:
14. Նիկոլ Փաշինյանի հակահայկական քարոզչական ողջ **կամպանիան** կառուցված է հանրային դիմադրողականությունը փորձության ենթարկելու սկզբունքի վրա:

15. եթե նրանց հաջողվի կրկին իշխանություն ունենալ, ապա ռեալ **պրոցես** կսկսեն:

Երբեմն, մեծ լսարան գրավելու միտումով հաղորդաշարն են անվանում օտար բառով: 168.Ժամ-ը ունի **Պրեսինգ** (մի շարք խաղաձևերում ակտիվ պաշտպանության ձևերից մեկը), **Ռեվյու** (թատերական ներկայացում) հաղորդաշարեր:

Վերջին շրջանում հրապարակախոսական լեզվում ակտիվ գործածություն ունեցող օտար բառերից են **մեսիջ**, **կապիտուլյանտ**, **ռևանշ** (փոխվրեժ), **քեյս** (գործ, հարց), **վերոսը**, **ֆարս** (խեղկատակություն), **դելիմիտացիա** (սահմանագատում), **դեմարկացիա** (սահմանագծում), **դեֆուլտ** (պարտականությունները չկատարելը), **մանիպուլացիա** (նենգափոխում) և այլն. դրանց հայերեն տարբերակները գրեթե չեն կիրառվում:

1. Ուկրաինական **քեյսը** լուծված է:

2. Այսօր կայացած դատական **ֆարսի** ժամանակ ավարտվել է Արցախի ռազմաքաղաքական դեկավարների նկատմամբ մեղադրական ակտի հրապարակումը:

3. Այսօր կարող ենք փաստել, որ ԱՄՆ-ը քաղաքական **մեսիջ** է ուղարկել նաև Հայաստանի հանրությանը, որ Փաշինյանն այլևս նրանց համար քաղաքական գործոն չէ:

4. Ինֆորմացիոն «**վերոսներով**» սեփական հանրության մեջ վախի, անելանելիության մթնոլորտ է ստեղծում

5. ԵՄ-ի ընդլայնման բանակցություններն ինձ հիշեցնում են Հայաստան-Ադրբեջան դելիմիտացիայի գործընթացը:

6. Միևնույն ժամանակ պետական պարտատոմսերի ճնշող մեծամասնությունը գտնվում է ճապոնական իրավաբանական և ֆիզիկական անձանց ձեռքին, ինչը նվազեցնում է **դեֆուլտի** վտանգը:

7. Հայ ժողովուրդը պետք է զգոն լինի և չտրվի քաղաքական մանիպուլյացիաների:

Օտար բառերը ԶԼՄ-ների լեզվում ցուցաբերում են բառակազմական ակտիվություն: Շատ են օտար և հայերեն բաղադրիչների համադրությամբ (կամ հարադրությամբ կազմված բառերը. ինչպես **ֆուրոր** (աղմկալի հաջողություն) անել, **գրանտակեր**, **սկանդալային**, **արբիտրաժային** (իրավավարական) **Գեոքաղաքական**, **դիլետանտություն** (անհմտություն) և այլն:

Գեոքաղաքական այն շարժերը, որ տեղի են ունենում Մերձավոր Արևելքում, հետևյալ տրամաբանության մեջ են ընթանում՝ կոնֆլիկտներ պետք է հնարավորինս քիչ լինեն:

Այս վիճակն ունենք ոչ թե այս իշխանության **դիլետանտության**, այլ նրա պատճառով, որ հայկական շահը նրանք չեն ներկայացնում:

Ադրբեջանը Հայաստանի դեմ հայց է ներկայացրել Հաագայի մշտական **արբիտրաժային** դատարան՝ պահանջելով փոխհատուցել իբրև թե Արցախում շրջակա միջավայրի և եզակի բնության «ոչնչացման» համար:

Ի դեպ, Ադազարյանն ու Ասլանյանը որոշել են **ֆուրոր անել**՝ Նիկոլ Փաշինյանի վարչակարգը տապալելու մասին հայտարարություններով: 04.02

Այսպիսի կազմություն ունեն որոշ դիպվածային բառեր, որոնց միջոցով լրագրողը դրսևորում է նաև իր վերաբերմունքը, օրինակ՝

Փաշինյանի՝ սոցցանցային, **տիկ-տոկային ակտիվության** մասին, ինչով է դա պայմանավորված:

Կառավարությունը պարտավոր է այս փուլում ևս կարիքների վերագնահատում անել և վերանայել իր **«տապառային»** մոտեցումը:

Ավինյան, **չօպելով** համբալ, ուր են ավտոբուսի ձմեռային անվադողերի փողերը:

ՔՊ կուսակցության ղեկավարությունն օտարերկրյա գործակալությունների **գրանտակեր** (դրամաշնորհ ուտող) ֆերմայում աճեցրած արհեստական օրգանիզմ է՝ մի քաղաքական թյուրիմացություն և այլն:

Քաբաբ առ քաբաբ թալանչիների թալանածը հետ եմ բերելու:

Դիպվածային են նաև ընդգծված բառերը.

Ձեր սիրելի ու պաշտելի **փոխվարչաՓԵԴ** Մհերն է

Ախր դա **չվարչապետ** է...ինքն ուղղակի հայ չէ, հայ ազգի թշնամին է:

Քննության առարկա տեքստերում դիմավոր բայի կամ միադիմի կապակցությունների (կարելի է, պատրաստ է) և անորոշ դերբայի գուգորդամբ կազմված շարահյուսական կառույցների մեծ մասում անորոշ դերբայը դրված է ուղիղ ձևով, նույնիսկ եթե դիմավոր բայը անվանական բաղադրիչով բայական հարադրություն է և դերբայը անվանական մասի հատկացուցիչ է.

1. Այս գազաթնաժողովը լավ հնարավորություն է ստանալու կոալիցիոն գործընկերների ու քրիստոնյա բարեկամների աջակցությունը և նրանց **ներգրավել** հայ ազգին մտահոգող խնդիրներում: Բայց դա նաև մեզ համար հնարավորություն է քրտնաջան **աշխատել**:

2. **Փաշինյանի այդ խոսքերը Թուրքիային հիմք կտա պնդել, որ Հայաստանը տարածքային պահանջներ ունի Թուրքիայից:**

3. Մեր զինված ուժերը ուշադիր հետևում են Կորեական թերակղզում ԱՄՆ-ի ռազմավարական ուժերի հաճախակի հայտնվելուն և պատրաստ են **օգտագործել** ցանկացած միջոց,

4. Եվ վերջապես, սրանք չէի՞ն, ովքեր հրաժարվեցին ակտիվ **դիմադրել** 2023 թվականի սեպտեմբերին Արցախի խաղաղ բնակչության դեմ Ադրբեջանի ցեղասպանական գործողությունները:

5. Վերջին 24 ժամերի ընթացքում բախտ եմ ունեցել որոշ ժամանակ **անցկացնել** այս համաժողովի պատերից դուրս

6. ԿԺԴՀ պաշտպանական գերատեսչությունը հավելել է, որ Փհենյանը **պատրաստ է զսպել** Միացյալ Նահանգներին, և որ Վաշինգտոնը պետք է դադարեցնի հետագա սադրանքները:

7. Գազաթնաժողովը լավ հնարավորություն է երկխոսել այլ համայնքների ու խմբերի հետ՝ մեծացնելով իրազեկությունը միմյանց հուզող հարցերի նկատմամբ

8. Բայց եթե մենք ի վիճակի լինեինք մեր պատմությունից դասեր **առնել**, մենք գաղափարապես դաշնակցական չէինք լինի, կլինեինք ինչ-որ ուրիշ բան:

9. Մենք ձգտում ենք հասնել երկարատև խաղաղության:

10. Հնարավորություն կար Ուկրաինայի համար շատ ավելի ձեռնտու պայմաններով պատերազմն **ավարտել**:

11. Իշխանությանն առաջին դեմքի մակարդակով տրված է ընտրական գործընթացի ռեպրեսիաների մեկնարկը՝ նպատակ ունենալով **կաշկանդել** ընդդիմադիր թեկնածուին:

Երբեմն այսպիսի կառույցներում անորոշ դերբայի փոխարեն կիրառում են բայի դիմավոր ձև.

1. Ինչպե՞ս ես կարողանալու թույլ չտալ, որ գերտերությունները Հայոց Ցեղասպանության հարցն օգտագործեն, երբ դու անգամ **չես կարողանում** Հայաստանի տարածքներն **ազատես** ադրբեջական օկուպացիայից:

2. Եթե ինքը կարող է որպես պաշտոնյա այցելել Արցախ, ասել, որ սա Հայաստանի մի մաս է, **ընդունի** մի մարդու առաջնորդությունը, որն ասում է՝ Արցախը Հայաստան է, մինչև 2020 թ.:

3. ԱՄՆ փոխնախագահը նշել է, որ ԱՄՆ-ն և Ուկրաինան շարունակում են քննարկումները, որպեսզի կարողանան այդ կարևոր նպատակը կյանքի **կոչեն**:

4. Բա երկրի ղեկավարն իրավունք ունի՞ սուտասան **լինի**:

Բանավոր խոսքում տարածված գրական հայերենի լեզվական նորմերին չհամապատասխանող ոչ մեծ թվով այլ իրողություններ ևս գտնվել են ուսումնասիրության առարկա տեքստերում:

Օրինակներ.

1 տարուց ընտրություններ են լինելու Հայաստանում:

Նկարելուց չեմ հոգնում, **ինձ հաճելի է նկարելը:**

Բա ինչի՞ հենց նախագահները պահանջեցին բացահայտել բանակցային փաստաթղթերը:

Սրան ի պատասխան, **փոխարենը** հայտարարագրումը դադարեցնելուն, իշխանությունը «գաթակղիչ» առաջարկներ է անում.

Կապիտուլյանտի հետ **համախմբվելու չկա:**

Ավելորդ բառի գործածություն

Պատճառը պետության **վերցրած** արտաքին պարտքի ծավալն է:- ավելորդ բառ մասնագետների համար **կրկնակի անգամ** բարդ է, երբ քաղցկեղով հիվանդը երեխա է:

Լրագրողները նախարարին **հիշեցրեցին**, որ ...

Միացյալ Նահանգները ներկայումս **չունեն** Եվրոպայում ամերիկյան զորքերի թվաքանակը կրճատելու մտադրություն:

Այսպիսով՝ ԶԼՄ-ների լեզվում մեծ թիվ են կազմում և տարերայնորեն մուտք են գործում օտար բառեր, օտար բաղադրիչներով կազմություններ: Մի կողմից այդ գործընթացը բնական է լեզվի համաշխարհայնացման ֆոնին, մյուս կողմից չպետք է վտանգվի հայերենը՝ որպես ազգային ինքնության պահպանման ցուցիչ:

Մեր կարծիքով պետք է փոխվի մայրենի լեզվի նկատմամբ վերաբերմունքը: Հասարակությունը մաքուր գրական հայերենով հաղորդակցվելը պետք է համարի նորաձև ու արդիական և խուսափի ինչպես օտար բառերի անհարկի գործածությունից, այնպես էլ լեզվական սխալներից:

Շնորհավորում եմ բոլորիս Մայրենիի օրը և մաղթում, որ մի օր մեր սերունդներին վերադարձնենք փետրվարյան տոների փառահեղությունը:

Ներսիսյան Վարսիկ
ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան
լեզվի ինստիտուտի ավագ գիտաշխատող, Բ.Գ.Թ., դոցենտ
varsik.nersisyan@mail.ru

ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐՈՒՄ ՀԱՅԵՐԵՆԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Փետրվարի 21- ը Մայրենի լեզվի միջազգային օրն է, որն առիթ է մեկ անգամ ևս արժևորելու, մեծարելու մեր մայրենին, մտորելու նրա շուրջ... Իսկ մեր մայրենին հայերենն է, որով մտածելու, շփվելու, գրավոր և բանավոր հաղորդակցվելու պատիվ ունենք բոլորս: Լեզուն և մտածողությունը, ինչպես հայտնի է, փոխկապակցված են, և մեկն առանց մյուսի գոյություն չունի: Իսկ ինչպե՞ս ենք մտածում մենք՝ մեր մայրենիով՝ հայերենով խոսողներս, ինչպե՞ս, ի՞նչ բառապաշարով ենք շփվում, հաղորդակցվում միմյանց հետ, ի՞նչ վերաբերմունք ունենք միմյանց նկատմամբ...

Հայերենը, այո՛, յուրաքանչյուրիս և միաժամանակ բոլորիս է պատկանում, ինչպես մեր փոքրիկ հայրենիքի յուրաքանչյուր հատված, որտեղ ծնվել և ապրում է կամ ապրել է մեզանից յուրաքանչյուրը: Եվ ամեննին կարևոր չէ, թե տվյալ վայրն ինչպե՞ս է կոչվում՝ Վանաձոր, թե՞ Գյումրի, Դիլիջան, թե՞ Երևան, Ստեփանակերտ, թե՞ Իջևան....: Այո՛, բոլորս նույն հայն ենք, նույն լեզվի կրողը: Իսկ ի՞նչ ենք անում մենք. խոսում ենք հայերեն՝ հաճախ ամեն մեկս մեր երևակայած բարձունքից մյուսին անտեղի վիրավորելով ու ցավեցնելով: Եվ, կարծում ենք, ամեննին կարևոր չէ՝ դա անում ենք մաքրամաքուր գրական հայերենով, բարբառով, թե՞ խոսակցական՝ օտարաբանություններով, անճշտություններով լի մի լեզվով: Ավելին՝ չես էլ հասկանում՝ ո՛րն է ավելի անընդունելի. գրագետ ու կանոնիկ, բայց ասելություն սփռող շարադրանքը, թե՞ հակառակը՝ նույն նպատակով, բայց սխալներով լի խոսքը: Ամեն անգամ, երբ առիթ է լինում առնչվելու այդ իրողությանը, ակամա հիշում եմ մի առիթով Ստեփանոս Մալխասյանցի հետևյալ միտքը. «*Բառերի միջոցով մենք կարող ենք հասկացողություն կազմել որևէ ժողովրդի քաղաքակրթության ընթացքի մասին... Եթե հնարավոր լիներ հայոց լեզվի այնպիսի մի բազմահատոր բառարան կազմել, որի յուրաքանչյուր հատորը պարունակելիս լիներ լեզվի մեջ գործածված բոլոր բառերը, սկսած ութերորդ*

դարից Քր. առաջ մինչև մեր օրերը, ապա այդ 27 հատորները միմյանց հետ համեմատելիս մենք կկարողանայինք ճշգրիտ գաղափար կազմել, թե ո՞ր դարում ազգը ի՞նչ բանում ի՞նչ առաջադիմություն կամ հետադիմություն է արել և ո՞ր դարում ո՞ր ազգի ազդեցության է ենթարկվել: Բայց այսպիսի բառարան մինչև հինգերորդ դարը Քր. հետո ունենալ չենք կարող... Հինգերորդ դարից հետո արդեն կարելի է դարից դար բառարաններ կազմել և նրանց միջոցով ուսումնասիրել ազգի քաղաքակրթության և կրած ազդեցությունների ընթացքը» (Մշակ, 1910, հ.244)¹:

Այո՛, լեզուն ազգի քաղաքակրթության ցուցիչն է, և գուցե լա՞վ է, որ այդպիսի բառարան հնարավոր չէ կազմել, այլապես ի՞նչ կարելի էր մտածել այսօրվա մեր լեզվամտածողության և լեզվավիճակի մասին: Այո՛, կարելի է շատ գեղեցիկ մակդիրներով բնութագրել հայերենը, կարելի է երգեր և բանաստեղծություններ ձոնել նրան՝ ցույց տալու համար մեր սերն ու նվիրումը, բայց այդ ամենը հօդս է ցնդում, երբ առերեսվում ենք իրականությանը, այսպես այսած, խոսողության գործընթացին: Մա-նուկ Աբեղյանը կարծես այսօրվա մասին գրած լինի. «Քանի կյանքի մեջ հայերենն ար-համարհված է, մեր դպրոցում կարգին հայերենի ուսում չի կարելի տալ ընդհանրա-պես»²: Եվ ո՞րն է լուծումն ըստ նրա. «...Կյանքը փոխելն իհարկե մեր ձեռին չէ, բայց մենք կարող ենք դպրոցն այնպես կարգավորել, որ արտաքին ազդեցությունները գոնե պակասեն, և համեմատաբար ավելի լավ հայերեն սովորեն աշակերտները»³: Նկատելի է, որ Մ. Աբեղյանը նախևառաջ խնդիր է համարում օտար ազդեցությունները:

Անշուշտ, հրաշալի է, որ մեծերն անդրադարձել են մեր խնդիրներին և այնպիսի դիպուկ ձևակերպումներով ներկայացրել դրանք, որ մինչ օրս արդիական են և ուսա-նելի, բայց միաժամանակ ցավալի է, որ մեր խնդիրները կարծես չեն փոխվում...

Այսօրվա մեր լեզվամտածողության, լեզվավիճակի ճշգրիտ արտացոլանքը թերևս ամենից առաջ կարելի է տեսնել զանգվածային լրատվամիջոցների տարատե-սակ դրսևորումներում: Աշխարհաքաղաքական այս բարդ ժամանակներում, մեր կամ-քից անկախ, լրատվության լեզուն ամենօրյա ուշադրության է արժանանում նաև մասնագետներիս համար:

¹ Է. Աղայան, Հայ լեզվաբանության պատմություն, հ. 2, Ե., 1962, էջ 78:

² Մ. Հարությունյան, Մանուկ Աբեղյան. կյանքն ու գործը, Ե., 1970 էջ 72:

³ Մ. Հարությունյան, նույն տեղում:

Փորձենք ներկայացնել մեր դիտարկումները զանգվածային լրատվամիջոցների լեզվավիճակի վերաբերյալ <https://www.aravot.am> լրատվական կայքի օրինակով, որի լեզուն, ինչպես ցույց են տալիս մեր դիտարկումները, հիմնականում համապատասխանում է նորմայի պահանջներին, իսկ շեղումներն առկա են խոստղների շրջանում, ոչ թե վերլուծական հատվածներում: Թերևս դա է պատճառը, որ մեր դուրս գրած օրինակները շատ հաճախ կրկնվում են նաև այլ լրատվամիջոցների էջերում:

Այսպես՝ կայքի էջերում տեղ գտած նյութերում առկա են մի շարք վրիպակներ, բացթողումներ, անճշտություններ, խոսակցական լեզվին բնորոշ տարրեր, որոնք խմբավորել ենք հետևյալ կետերով.

1. Կետադրական շեղումներ

Ա. Ինչպես այլ լրատվամիջոցներում, այնպես էլ նշված կայքում նկատելի է հարցահարաբերական դերանունների՝ ամենուր հարցական նշաններով կետադրելու միտում: Օրինակ՝ «*Ի՞նչ վերաբերում է Շահրամանյանին, նախ հլը մինչև նամակ գրելը, թող մի հատ պատմի՝ ինքը ո՞նց է իր «ախրաննիկներով» (թիկնապահներով.-խմբ) կարողացել Արցախից դուրս գալ, իսկ մնացած գործընկերները չեն կարողացել դուրս գալ....,- ասաց Ալեն Սիմոնյանը*⁴: Նկատելի է, անշուշտ, նշված պաշտոնյայի խոսքում խոսակցական լեզվին բնորոշ տարրերի առկայություն ևս: Սակայն անդրադառնալով տարածված սխալին՝ իբրև հուշում՝ նշենք. ճիշտ կողմնորոշվելու նպատակով կարելի է մտքում բառն արտասանել հարցական հնչերանգով. ստացվում է արդյոք: Չէ՞ որ հարցական նշանն առոգանության նշան է և հարմարեցված է բանավոր խոսքին: Մամուլում շատ է հանդիպում նաև հարցական դերանունների՝ համանուն շաղկապների հետ շփոթելը և դրանցից առաջ ստորակետ դնելը, ինչպես՝ ««Ժողովուրդ» օրաթերթը հարցմամբ դիմել է պաշտպանության նախարարությանը՝ տեղեկանալու համար, թե կոնկրետ, *որ* կետերից է սկսվելու սահմանագծումն ու սահմանազատումը....»⁵: Ակնհայտ է, որ ստորակետ դնելն անընդունելի է *որ* որոշյից առաջ:

Բ. Տարածված է նաև **կապային կառույցները** համանուն շաղկապների հետ շփոթելու երևույթը, ինչի արդյունքում դրանք հաճախ նախադասության մնացած անդամներից տրոհվում են ստորակետով. «*Մինչ հանդիսավոր մասի սկսելը*, հյուրերը

⁴ <https://www.aravot.am/2025/02/15/1470353/>

⁵ <https://www.aravot.am/2025/02/17/1470590/>

ծանոթացան վարժարանի՝ վերջերս հիմնանորոգված ու կահավորված մարզադահլիճի պայմաններին, որտեղ մարզվում էին նաև «Ապագա զինվոր» դպրոցի սաները, որոնք իրենց տնօրեն Սամսոն Մուրադյանի հետ եկել էին մասնակցելու ռազմամարզական կրթօջախի տոնին»⁶: Ակնհայտ է ստորակետի անտեղի գործածությունը:

Գ. Երբեմն **նախադասության ենթական** փոխվում է, սակայն *և* շաղկապից առաջ երբեմն ստորակետ չի դրվում, ինչպես պահանջում է լեզվական նորմը, օրինակ՝ «Վարդանյանը հայտարարել էր, որ այդ փաստաբանն իրեն ոչ մի իրավական օգնություն չի ցուցաբերել, երբևէ չի այցելել մեկուսարան *և* ինքը նրան չի վստահում»⁷:

Անշուշտ, կետադրական այլ կարգի անճշտություններ, բացթողումներ ևս հանդիպում են, որոնցից թերևս ամենատարածվածները ներկայացրինք:

2. Բառագործածության սխալներ

Զանգվածայի լրատվամիջոցների էջերում տարածված են նաև բառագործածության մի շարք սխալներ: Հաճախ կարելի է հանդիպել *վերաբերել* և *վերաբերվել* հարանունային զույգի սխալ գործածության, ինչպես՝ «Ռ. Քոչարյանն ու նրա պաշտպանական թիմի անդամները համաձայնեցին՝ դիտարկումը *վերաբերվում է* (փոխ.՝ *վերաբերում է*) Բաքվում *ընթացող Արցախի* ռազմաքաղաքական դեկավարների դատավարական բեմադրմանը»⁸: Նկատելի է նաև շարադասական շեղում (փոխ.՝*Բաքվում ընթացող դատավարական...*), որի արդյունքում միտքը կարող է սխալ ընկալվել:

4. Բայի խոնարհմանն առնչվող սխալներ

Մամուլում և զանգվածային այլ լրատվամիջոցներում շատ տարածված են բայի խոնարհմանն առնչվող տարատեսակ շեղումներ ևս, որոնցից երկուսին կանդրադառնանք ստորև:

Դիտարկենք հետևյալ նախադասությունը. «*Բացառված չի*, որ Սնուպ Դոգը չի պատասխանում, որովհետև *բռնկել է* (օտարաբանության հայերեն համարժեքն է՝ *արգելափակել*, Վ.Ն.) Հայաստանից եկող բոլոր զանգերը, նամակները, գրություններն ու դիմումները, որ հանգիստը չխաթարեն»⁹: Պետք է լիներ՝ *բացառված չէ, որ...*, քանի որ գրական արևելահայերենում հարակատար դերբայը դիմավոր ձևերի հետ

⁶ <https://www.aravot.am/2025/02/17/1470590/>

⁷ <https://www.aravot.am/2025/02/14/1470201/>

⁸ <https://www.aravot.am/2025/02/11>

⁹ <https://www.aravot.am/2025/02/15/1470331/>

բաղադրյալ ստորոգյալ է կազմում, իսկ ժխտական խոնարհումն արտահայտվում է *ստորոգելի + հանգույց* կաղապարով, ինչպես՝ *ուսանող է-ուսանող չէ, բացառված է-բացառված չէ* ևն, որը տարբերվում է պարզ ստորոգյալի ժխտականի կազմության եղանակից, ինչպես՝ *գրում է-չի գրում*: Նկատելի է, որ պարզ բայական ստորոգյալի եզակի երրորդ դեմքի *չի*-ն բայից առաջ է գործածվում:

Բաղադրյալ ստորոգյալի կազմության մեկ այլ դրսևորում է *ղիմավոր բայ + անորոշ դերբայ* կառույցը. այս դեպքում անորոշի խոնահված ձևերի գործածությունը սխալ է: Օրինակ՝ «Իսկ սույն պարոնը *կարո՞ղ է* հանկարծ *հիշի*, թե ովքեր են Արցախը ճանաչել Ադրբեջանի կազմում, թե ովքեր էին իրենց գործողություններով նպաստում հյուծող շրջափակման խորացմանը...»¹⁰: Ճիշտ տարբերակն է՝ *կարո՞ղ են հանկարծ հիշել*:

5. Համաձայնության սխալներ

Այս կարգի շեղումներ առկա են հատկապես *բազմակի ենթակա + ստորոգյալ* կառույցներում, որոնցում ստորոգյալը հաճախ եզակի թվով է գործածվում: Օրինակներ՝ «Փետրվարի 7-ին, ժամը 23:15-ին (մասնավորող պարագայական բացահայտչից հետո ստորակետը ևս բացակայում է, Վ.Ն.) Շիրակի մարզի Քեթի համայնքի բնակիչներից մեկը զանգահարել է «911» ծառայություն՝ տեղեկացնելով, որ *անասնակեր ու ավտոմեքենա է այրվում*»¹¹: «Իշխանությունները կեղծ հայտարարություն են անում, թե գնում են խաղաղության, իրականում այս խաղաղության տակ *թաքնված է ամենամեծ հանձնումը, ամենամեծ կորուստները*»¹²:

Բերված նախադասություններում *այրվում է, թաքնված է* ստորոգյալները պետք է դրվեին հոգնակի թվով:

Երբեմն մամուլում հանդիպում են ոչ ճիշտ շարադասությամբ, համաձայնության, կետադրության տարատեսակ սխալներով լի անհասկանալի նախադասություններ, ինչպես՝ «Սակայն այժմ ժամանակն է, որ մեր բոլոր երկրները, և *մենք՝ ովքեր բախտ են ունեցել ստանալու քաղաքական իշխանություն մեր ժողովուրդներից*, այն իմաստուն կերպով օգտագործենք՝ նրանց կյանքը բարելավելու համար»¹³: Տարաբնույթ այսպիսի շեղումները խոսքը դարձնում են անհասկանալի, անըմբռնելի, երբեմն

¹⁰ <https://www.aravot.am/2025/02/12/1469850>

¹¹ <https://www.aravot.am/2025/02/12/1469888/>

¹² <https://www.aravot.am/2025/01/23/1466333/>

¹³ <https://www.aravot.am/2025/02/15/1470349/>

լրացուցիչ ջանք պահանջում մայրենի լեզվով գրվածն անսխալ հասկանալու առումով: Բերենք նմանատիպ այլ օրինակներ ևս՝ «*Դավիթ Բշխանյանը նրա հետ խոսելուց հետո, երբ վերադառնում էինք Ստեփանակերտ, արդեն լսվել էին առաջին կրակոցները, այդ կրակոցներից 20 թույե առաջ էր Ալեն Միմոնյանը զանգել Դավիթ Բշխանյանին*»¹⁴: «Այս խայտառակությունը ոչ միայն վնասում է մեր բնակիչներին, այլ նաև ԵՄ մեր գործընկերների մոտ մեղմ ասած անլուրջ տպավորություն է ստեղծվում՝ քաղաքային իշխանությունների անպատասխանատվության պատճառով»¹⁵: Նշված դեպքերում նույնիսկ դժվար է որոշել, թե ի՞նչ կարգի անճշտություն է առկա (մեկից ավելին են դրանք):

Բառերի անհարկի կրկնությունը ևս մերժելի է, ինչպես՝ «Մարիամաձոր գյուղը Հաղորթի գեղատեսիլ գյուղերից էր»¹⁶: (Փոխ.՝ Մարիամաձորը Հաղորթի գեղատեսիլ գյուղերից էր):

Ամփոփելով մեր դիտարկումները զանգվածային լրատվամիջոցներում, մասնավորապես <https://www.aravot.am> կայքում լեզվի գործածության վերաբերյալ՝ արձանագրենք, որ լեզվական նորմայից շեղումները շատ չեն բուն լրագրողական խոսքում, սակայն դրանք բազմաթիվ ու բազմաբնույթ են մեջբերումներում, որոնք, բնականաբար, ամենատարբեր շերտերի մարդկանց խոսքն են ներկայացնում և կարող են դիտարկվել ոճական նորմայի տեսանկյունից: Սակայն որոշ դեպքերում անհրաժեշտ է համապատասխան աշխատանք կատարել՝ գրական հայերենի լեզվական նորմայի սահմանները չխախտելու, մայրենին չվնասելու նպատակով: Մասնավորապես կետադրության հարցում շեղումներն անթույլատրելի են ինչպես բուն լրագրողական, այնպես էլ մեջբերվող ուղղակի և անուղղակի խոսքի պարագայում: Հասկանալի է, որ տեղեկատվության ծավալով, նրա արագ փոխանցման անհրաժեշտությամբ պայմանավորված՝ կարող են լինել նաև տեխնիկական վրիպակներ, բացթողումներ, որոնք շտկելու ուղղությամբ ևս կարելի է համապատասխան աշխատանքներ կատարել: Ավելացնենք նաև, որ մեր դիտարկումները լրատվության լեզվի բարելավմանն են միտված և հարգարժան լրագրողներին օգտակար լինելու մղումով են արված:

¹⁴ <https://www.aravot.am/2025/02/14/1470212/>

¹⁵ <https://www.aravot.am/2025/02/14/1470212/>

¹⁶ <https://www.aravot.am/2025/02/11/1469670/>

«ԺՈՂՈՎՈՒՐ» ՕՐԱԹԵՐՔԻ ԼԵԶՎԻ ՄԱՍԻՆ

Ժամանակակից մարդու կյանքի անբաժանելի մասն է տեղեկատվությունը որ նա ստանում է տարբեր աղբյուրներից՝ հեռուստատեսություն, ռադիո, համացանց և այլն: Զանգվածային լրատվության միջոցները (այսուհետև՝ ՉԼՄ) որոշակիորեն ձևավորում են հասարակության մտածելակերպը: Մարդը, կարելի է ասել, ինչ-որ տեղ իրականացվող գաղափարախոսության ծնունդ է¹: Ժամանակակից աշխարհում լուրերը մի քանի բոլորում հասանելի են դառնում բոլորին, և մարդկությունը տեղեկանում է աշխարհում կատարվող նորություններին: Մարդկանց կյանքը ընթանում է ընդհանուր իրադարձությունների հորձանուտում՝ պատերզմներ, երկրաշարժեր, սպանություններ և այլն:

Մեր նպատակն է անդրադառնալ Հայաստանի Հանրապետության զանգվածային լրատվության միջոցներից «Ժողովուրդ» օրաթերթի լեզվին: Օրաթերթի առաջին էջում ծանուցվում է, որ *թերթը բոլորի և ամեն ինչի մասին* է՝ հուշելով, որ այն որևէ քաղաքական կուսակցության չի պատկանում: Եվ, իսկապես, թերթը տեղեկատվություն է հաղորդում ամեն ինչի մասին. կան տարբեր՝ քաղաքական, սոցիալական, իրավական, մշակութային խնդիրներ լուսաբանող էջեր:

Խորհրդային կշռադատված, համահարթեցված լեզուն, որ համարյա նույնն էր բոլոր լրատվամիջոցներում, հետխորհրդային շրջանում դարձավ զգացական և տվյալ պահի պահանջով արված: Այն որոշակիորեն կրում է նաև լրագրողի ընդհանուր մակարդակի, զարգացածության, կողմնորոշումների դրոշմը: Ընդ որում, մամուլով և

¹ Այսպես, օրինակ, խորհրդային «Մարդը Կապուցիների բուլվարից» ֆիլմում ներկայացված է, թե կինոյի միջոցով ինչպես են բռնությամբ լի տեսարանները ազդում ֆիլմի հերոսների վրա, և, ընդհակառակը, մեղմ երաժշտությունը, բարությունը, քաղաքավարի վարքագիծը մարդուն դարձնում են կանխատեսելի, հավասարակշռված: Այսինքն՝ արտաքին գործոնները որոշակի դեր ունեն մարդու պահվածքի համար: 20-րդ դարի կեսերից սկսած՝ նկարահանվեցին բռնության տեսարաններով լի բազմաթիվ ֆիլմեր, հեռուստատեսիվներ, և մարդիկ սկզբնական շրջանում, կարելի է ասել, հաճույքով էին դիտում դրանք: Սակայն, ժամանակի ընթացքում հետաքրքրությունը, մեր կարծիքով, նվազեց, և հիմա ավելի քիչ թվով մարդիկ են դիտում այդ ֆիլմերը:

հեռուստաթերով, սոցիալականներով սփռվող խոսքը լի է բացասական տեղեկատվությամբ, որն ազդում է հասարակության մտածելակերպի, նաև ենթագիտակցության վրա՝ փոխելով նրա գնահատողական վերաբերմունքը տեղի ունեցող իրադարձությունների նկատմամբ: Բացասական տեղեկատվությամբ հագեցած են ոչ միայն տեղական, այլև միջազգային լուրերը՝ պատերազմներ, հրդեհներ, ջրհեղեղներ, երկրաշարժեր և այլն: Մարդն իրեն անպաշտպան է զգում, որի հետևանքով առաջանում է անտարբերություն ամեն ինչի նկատմամբ: «Մարդը չի կարող փոխել շրջակա աշխարհը. նա ոչինչ չի կարող փոխել, մենք ոչինչ չենք կարող փոխել, մեծ տերությունների խաղն է» և նման մտքերը մանիպուլյացիա են և բթացնում են հասարակությանը:

Իսկ ի՞նչ է մանիպուլյացիան: Այս բառը լատիներեն *manus* «ձեռք»² բառից: Էդ. Ադայանի «Արդի հայերենի բացատրական բառարանում»³ *մանիպուլյացիա* բառի բացատրությունը հղված է *ձեռնածություն* բառին, որը բազմիմաստ է՝ *տեսողական խաբկանք առաջացրող ճարպիկ շարժում(ֆոկլուս), այդպիսի շարժումներ ներկայացնելը, ձեռնածու լինելը և փոխաբերական իմաստով՝ խաբեություն, աչքակապություն*: Կարծում ենք՝ *մանիպուլյացիա և մանիպուլյատոր*⁴ բառերի առաջնային իմաստները փոխվել են: Բառարանում *մանիպուլյացիա* բառի փոխաբերական «խաբեություն, աչքակապություն» իմաստը, կարծում ենք, այժմ հաճախակի գործածության հետևանքով դարձել է նրա առաջնային իմաստը, որը հանդիպում և՛ ՋԼՄ-ներում, և՛ առօրյա խոսքում: Հանդիպել ենք *մանիպուլացնել* բային: Օր.՝ «Բոյկոտի ծավալները մեծ չեն» վերտառությամբ հոդվածում ՔՊ պատգամավոր Լիլիթ Մինասյանն ասում է. «Ո՛չ, պարոն Մարությանը *մանիպուլացնում* է. նա ընդամենը մի որոշ շարժակազմ է պատվիրել....» («Ժողովուրդ», 13. 02. 2025): (Նախադասությունը «.... որոշ շարժակազմ է պատվիրել» ճիշտ չէ: Խոսքերը պատգամավորինն են, սակայն լրագրողը պարտավոր է ուղղել այն): Մեկ այլ օրինակ՝ «Գյումրիում իշխանությունները *մանիպուլացնում են* հանրությանը» («Փաստ», 18.03.2025): Կարող ենք արձանագրել, որ *մանիպուլացնել* բայը մտել է հայերենի բառապաշար:

² *Дворецкий И.Х.* Латинско-русский словарь, «Русский язык», Москва, 1986.

³ **Էդ. Ադայան**, Արդի հայերենի բացատրական բառարան (այսուհետև՝ ԱՀԲԲ), «Հայաստան» հրատ., Ե., 1976:

⁴ *Մանիպուլյատոր* բառն ունի երեք իմաստ, որոնցից առաջին երկուսը տեխնիկական տերմիններ են՝ «1. Հեռագրական բանալի կամ ավելի բարդ հարմարանք՝ հեռագրային ազդանշաններ հաղորդելու համար: 2. Բարդ արտադրական և ստուգիչ գործընթացներ կարգավորող սարք»: Երրորդ իմաստը հղված է *ձեռնածու* բառին (ԱՀԲԲ, 964):

Մեր օրերում տեղակատվության մեջ մեծ դեր ունի *մանիպուլյացիան*: *Մանիպուլյացիան* մարդուն բնորոշ վարքագիծ է, որ փորձում է դիմացինին համոզել մի բանում, անել մի բան, ինչ պետք է մանիպուլյատորին: Այն նաև իշխանությունն ամրապնդելու միջոց է⁵:

ԶԼՄ-ներում մանիպուլյատիվ միջոցները տարբեր են, ինչպես՝ ընթերցողին հետաքրքրելու համար վերնագրերի ինտրիգային լինելը, կասկածելի լուրերը որպես եղած իրադարձություն ներկայացնելը՝ ընդ որում հաճախ բերելով նաև չհիմնավորված թվային տվյալներ, ներկայացվող գովազդներով գայթակղելը, երբեմն նյութեր ցուցադրելը, որոնք իրականությանը չեն համապատասխանում, բթացնող կրկնությունները, պատերազմի ժամանակ կեղծ տեղեկատվությունը և բազմաթիվ այլ միջոցներ: Այս բոլոր միջոցները նոր չեն, և մարդկությունը միշտ օգտվել է մանիպուլյատիվ միջոցներից՝ իր տարաբնույթ նպատակներին հասնելու համար: Ընդ որում, պատճառները

⁵ Հիշենք Գեբելսի 10 կանոնները, որոնք պետք է ամրապնդելին Հիտլերի իշխանությունը: «1. Զենքի քանակը առ ոչինչ է, եթե իշխանությունը չի տիրանում մարդկանց հոգիներին: 2. Պրոպագանդայի միակ նպատակը զանգվածների էմոցիաները խելը պիտի լինի: 3. Այդ նպատակին հասնելու համար ամեն միջոց պիտի կիրառել: Կարևոր է, որ պրոպագանդայի ազդեցությունն արդյունավետ լինի: 4. Շատ կարևոր է, որ բացի «սպիտակ», այսինքն՝ ճշմարիտ փաստերի հետ մեկտեղ կիրառվեն նաև «գորշ», այսինքն՝ կիսաճշմարիտ փաստեր, իսկ երբեմն նաև «սև», այսինքն՝ բացահայտ սուտ փաստեր: Այս երեք տեսակի փաստերի համադրության միջոցով կարևոր է կառուցել ուղեղների լվացման արդյունավետ ծրագիր: 5. «Սևի», այսինքն՝ ստի աստիճանն ինչքան մեծ լինի և լայն տարածում ստանա, այնքան շատ մարդ կհավատա այդ ստին: Այստեղ կարևորն այն է, որ այդ համադրությունների արդյունքում մարդիկ հավատան արդպագանդային: 6. Որպեսզի ամբոխը կասկածների մեջ չընկնի, ուղերձները պիտի լինեն չափազանց պարզ ձևով ներկայացված՝ առանց ավելորդ ինտելեկտուալիզմի: «Հիշե՛ք, նշում էր Գեբելսը, որ «պրոպագանդայի ամենամեծ թշամին ինտելեկտուալիզմն է»: 7. Պրոպագանդան պետք ազդի ոչ թե մարդկանց գիտակցության, այլ զգացմունքների վրա: Իսկ դրա համար պրոպագանդան պետք է լինի վառ և ցայտուն: 8. Պրոպագանդայի մեսիջները պետք է հասկանալի լինեն հասարակ մարդու համար: Ավելին, մայրաքաղաքի բնակչի մեսիջը պետք է տարբերվի գավառներում ապրողներից: 9. Անընդատ պետք է գովաբանել և սիրաշահել հասարակ ժողովրդին, նրանց անվանել սիրելի, հարգելի, խելացի մակդիրներով: Միաժամանակ, ժողովրդի հետ միասին պետք է փառաբանել նաև առաջնորդին՝ ցույց տալով, որ «առաջնորդն ու ժողովուրդը նույն բանն են»: Որ «առաջնորդը գործում և աշխատում է բացառապես ժողովրդի համար»: Նույնացնելով առաջնորդին ու ժողովրդին՝ պետք է բացառել, որ նրանց արանքում գոյություն ունենան այլ քաղաքական սուբյեկտներ: Դրանց պետք է անվանել բացիներ, ժողովրդի թշնամիներ, քանզի առաջնորդին հակադրվողը չի կարող չհակադրվել նաև ժողովրդին: Եկեղեցու դերը պետք է նվազեցվի, քանզի եկեղեցու նկատմամբ և քրիստոնեական հավատքը պետք է փոխարինվի առաջնորդի հանդեպ հավատքով: Իսկ երկու հավատք թույլ տալ չի կարելի: Հիսուս Քրիստոսի իմաստն ու արժեքը պիտի նվազեցվի, նշվի, որ ժամանակակից Քրիստոսը հենց այսօրվա Առաջնորդն է: Ընդ որում, այս ամենը պետք է ներկայացնել բարձր պաթոսով և նույնիսկ արհեստական հիստերիա մտցնել ելույթներում, որպեսզի շարքային քաղաքացիների զգացմունքների վրա դա ազդի: 10. Նույն բանը պետք է կրկնել անընդհատ, որպեսզի տեղեկատվական մեծ քանակն ի վերջո վերածվի որակի՝ համոզելով հնարավորինս մեծ թվով մարդկանց: Իսկ երբ շատ մարդ են սկսում հավատալ ինչ-որ թեզի, ապա հոտային զգացումը սկսում է կլանել գրեթե բոլորին, և դրան հակադրվելը կդառնա անչափ դժվար»: Yerevan.Today . ԵՐԵՎԱՆՆ ԱՅՍՕՐ ԵԹԵՐՈՒՄ ՄԱՍՈՒԼԻ ՏԵՍՈՒՅՈՒՆ ՎԵՐԼՈՒՄԱԿԱՆ #Քաղաքական 12. 06. 2020:

տարբեր են լինում: Մանիպուլյատորի հիմնական նպատակը իշխանության գրավումը և իր անձնական շահերին ծառայեցնելն է:

Այսպես, Հոկտեմբերյան հեղափոխության ժամանակ բոլշևիկները խոստանում էին հավասարություն՝ բարձրագույն խոսքերով քարոզելով եղբայրություն, սակայն իրականում ամբողջ երկիրը ներքաշվեց քաղաքացիական պատերազմի մեջ, մտավորականությունը ոչնչացվեց կամ լքեց երկիրը:

Այժմ աշխարհում օգտագործվում են տարաբնույթ մանիպուլյատիվ տեխնոլոգիաներ, որոնք մարդկանց ինչպես անհատական, այնպես էլ հասարակության գիտակցությունը կառավարելու միջոցներ են՝ սկսած քաղաքականությունից, տնտեսական մրցակցությունից, մարդկանց հարաբերություններից և այլն:

Ընթերցողի, ունկնդրի վրա ազդելու միջոցներից մեկն օտար բառերի չպատճառաբանված գործածությունն է, որը որոշակի հոգեբանական ազդեցություն է ունենում մարդկանց վրա: Նա իրեն ոչ լիարժեք է զգում, քանի որ շատ բառերի իմաստները չի հասկանում, օր.՝, *տուրբուլենտություն* (լատ.՝ *turbulentus*՝ *փոթորկոտ, ցնցումային, խառնաշփոթ*), *տոլերանտություն* (լատ.՝ *tolerantia* - համբերություն, համբերատարություն, հանդուրժողականություն), *լիզինգ* (անգլ. *leasing*՝ *վարձակալություն*՝ *to lease*՝ *վարձակալել* բայից): Այս տերմինները հաճախ են օգտագործվում սոցիալական ոլորտում և լրագրության մեջ: Մարդը կարծում է, որ ինքը ոչինչ չի հասկանում շուրջը կատարվող իրադարձություններից, և հուսահատության ու անօգնականության զգացումն սկսում է աճել:

Այժմ՝ մրցակցության պայմաններում, ՁԼՄ-ները ընթերցողին գրավելու համար տարբեր միջոցներ են գործածում: Մարդիկ չեն սիրում կարդալ երկար տեքստեր կամ լսել երկարաշունչ խոսք: Նրանց ավելի հետաքրքրում են աշխարհում կատարվող իրադարձությունները, հրատապ խնդիրները: Լրատվամիջոցները շատ օգտվում են ինտրիգային վերնագրերից, որն ընթերցողին մղում է կարդալու տեքստը, ընդ որում, դրանք հիմնականում բացասական տեղեկատվություն են պարունակում: Այսպես՝ «Ժողովուրդ» օրաթերթի «Իրավիճակ» վերնագրաված էջում 6 հոդվածներից 4-ը թաքնված բացասական տեղեկատվություն են պարունակում՝ *Գործադուլ՝ Վրաստանում, Ինչու է կրկին փակ Վերին Լարսը, Կեղծ ահազանգ, Սպասում են ԱԺ-ի պատասխանին* («Ժողովուրդ», 17. 02. 2025, էջ 3): Պետք է նշել, որ որոշ լրատվամիջոցներում ընթերցողի

ուշադրությունը գավելու համար ընտրում են հոետորական հարցման ձևը: Այսպես, «Փաստ» հասարակական-քաղաքական օրաթերթում վերնագրերի մի մասը հոետորական հարցումներ են՝ *Արդյո՞ք որևէ լավատեսության հիմք է տալիս ձեռք բերված պայմանավորվածությունը, Ո՞ր ուղղությամբ են կողմերն ավելի շատ շարժվում՝ դեպի պատերա՞զմ, թե՞ խաղաղություն, Իսկ ի՞նչ ենք ուզում՝ դու՞րս գալ այս վիճակից, թե՞ շարունակ բռնություն «անուն դներ»* («Փաստ», թիվ 27(1450), 18. 03, 2025), *Զատկից հետո ներկա՞ծ ձուն ու՞մ է պետք* («Իրավունք», 17. 01, 2025):

Հասարակության վրա ազդելու մեթոդներից մեկն էլ հաճախակի գործածվող ժարգոնն է, հայհոյախառն արտահայտությունները եթերից, մամուլում և այլն:

Այսպես, հեռուստաէթերում հանդիպում ենք դեպքերի, երբ հաղորդավարը և նրա խոսակից/ներ/ը հեռուստամենամարտում գործածում են ոչ գրական բառեր՝ փորձելով հաճոյանալ ժողովրդի մի հատվածին, որն այնքան էլ լավ չի պատկերացնում ասվածի իմաստը, և նրան դուր է գալիս հասարակաբանությունն ու գոեհկաբանությունը: Վերջնական արդյունքում էթիկական նորմերի խախտման հետևանքով ունկնդիրը կամ ընթերցողը կորցնում է քննադատական վերաբերմունքը ասվածի նկատմամբ: Հայտնի է, որ նույնիսկ ժողովրդավարական երկրներում քաղաքական առաջնորդներից պահանջվում է հարձակողական, նույնիսկ ագրեսիվ հոետորիկա, այլապես նրա ընտրագանգվածը նրան կհամարի թույլ քաղաքական գործիչ (որոշ դեպքերում օգտագործում են նույնիսկ գործիքներ՝ մուրճ, սղոց, թուր և այլն): Մարդկանց երբեմն դուր է գալիս, որ ագրեսիվ վարքագիծ ունեցող անհատը բացասական վերաբերմունք է ցուցաբերում որևէ մեկի, սոցիալական խմբի, սոցիալական երևույթների նկատմամբ, աշխատում է իր կարծիքը պարտադրել մյուսներին՝ գործածելով այնպիսի բառեր և արտահայտություններ, որոնք ընդունված չեն և խախտում են էթիկայի նորմերը:

Համեմատենք «Ժողովուրդ» օրաթերթի լեզուն «Իրավունք» թերթի հետ:

Այսպես՝ «Իրավունք» թերթի «Ի դեպ» խորագրի տակ կարդում ենք. «ԱԳՆ-ին մոտ աղբյուրները պնդում են, որ նա չի վերադառնա Մինսկ, ավելին՝ Բելառուսի նախագահ Լուկաշենկոյի, այսպես ասած, *ինսաղու*, նա կտեղափախվի Ուկրաինայի մայրաքաղաք Կիև՝ որպես դեսպան»: Խոսքը Բելառուսի նախկին դեսպան Ռազմիկ Խումարյանի մասին է: *Ինսաղու* բառը, որ արաբերենից է, թուրքերենի միջնորդությամբ անցել է հայերե-

նի բարբառներին: Տվյալ նախադասության մեջ *ինստիտու*-ի փոխարեն կարելի էր գործածել հայերեն *ի հեճուկս* բառը: Մեկ այլ օրինակ. «Դեռ սաղմնային վիճակում «Կանայք հանուն խաղաղության» արշավը տապալվեց: Սա մենք չենք ասում, հենց ինքը՝ Աննա Հակոբյանն է ասել իր ծավալուն հոդվածում և *մուննաթ* է եկել, որ «արշավը հանդիպեց հայ կանանց մեռելային լռությանը» (նույն տեղում): Կարելի էր *մուննաթ*-ի փոխարեն ասել՝ *իր դժգոհությունն է հայտնել*: Կամ՝ «Փաշինյանը *հաթաթա* է տվել մարզպետներին.... Էնպես չանեք կին մարզպետներ նշանակեմ, որ խելքներդ գլուխներդ գա», «Կամարդույուշին ռեսարթով է սկսել տարին» ենթավերնագրի տակ կարդում ենք «.... Սկսել է մաղել գործ անող նվիրյալներին, իսկ մյուսներին, ինչպես մեր աղբյուրն է ասում, *պաշատ է արել куда подальше*» («Իրավունք», 17. 02. 2025, էջ 2): Օրինակ բերենք «Հրապարակ» թերթից. «Տեսա՞ք՝ ի՞նչ եղավ: խաղաղության բանակցությունները,.... Որոնց մասին այսքան երկար խոսում էին, *«փոզմիշ» եղան*» («Հրապարակ», 18.03.2025, էջ 5):

Նշենք, որ «Ժողովուրդ» օրաթերթի լեզուն գրագետ և հավասարակշռված է: Թերթում սուր հարցադրումներ չկան, հրապարակումներում տեղեկատվությունը չեզոք է. երևում է, որ փորձում են հասարակությանը ավելորդ չգրգռել և թողնում են նրա հայեցողությանը՝ ինքնուրույն եզրահանգումներ կատարելու: «Ժողովուրդ» օրաթերթի մեր դիտարկած համարներում ժարգոնային բառերի և արտահայտությունների չհանդիպեցինք:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Երկու խոսք	3
Առաքելյան Կ., «Հրապարակ» օրաթերթի լեզվի մասին	4
Բարսեղյան Ա., Հեռուստատեսության լեզուն (Հ 1 և 1 lurer.am)	9
Թելյան Լ., Լեզվական նորմից շեղումներ զանգվածային տեղեկետվության լեզվում	13
Խաչատրյան Ն., ՀՀ-ի «Լրաբեր» հաղորդաշարի լեզվական վերլուծություն	20
Ղազարյան Հ., Լեզվական շեղումներ («5-րդ ալիք» հեռուստաընկերություն)	37
Մարգարյան Լ., Հաղորդում մայրենիի տոնի առիթով	44
Մովսեսյան Ռ., Լեզվական սխալներ լրատվական կայքէջերից	47
Ներսիսյան Վ., Դիտարկումներ լրատվամիջոցներում հայերենի գործածության վերաբերյալ	54
Պապիկյան Ս., «Ժողովուրդ» օրաթերթի լեզվի մասին	60

ՀՀ ԳԱԱ Հ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԳՐԱԿԱՆ ՀԱՅԵՐԵՆԸ ԶԼՄ-ՆԵՐՈՒՄ
(ՄԱՅՐԵՆԻԻ ՕՐՎԱՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՆՅՈՒԹԵՐ)
21-Ը ՓԵՏՐՎԱՐԻ, 2025 Թ.

Ձևավորումը և էջադրումը՝
Մ. Խառատյանի

Կազմը՝ Ս. Արևշատյանի

ՀՀ ԳԱԱ ԼԻ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ